ՊՐՈԱԿՏԻՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ

Երևան, հունվար 2017

Մշտադիտարկման զեկույց

Այս մոնիտորինգի նպատակն է ներկայացնել Տեղեկատվության ազատության պրոակտիվ հրապարակման օրենսդրական հիմքերը, գնահատել, թե ՀՀ պետական կառավարման մարմիններն ինչպես են իրականացնում տեղեկատվության պրոակտիվ հրապարակումը պաշտոնական ինտերնետային կայքերում, ինչպես են կիրառվում տեղեկատվության ազատության իրավունքի իրացման էլեկտրոնային հնարավորությունները, ինչպես նաև վերհանել ոլորտում առկա խնդիրներն ու համապատասխան առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման մարմիններին: Մոնիտորինգն իրականացրել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՄեքԴև հիմնադրամի աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..…..…..…2

Մոնիտորինգի նպատակը և խնդիրները……..……..…..…3

Մեթոդաբանությունը……..……4

ԲԱԺԻՆ Ա. Մեփական նախաձեռնությամբ պաշտոնական տեղեկատվության տրամադրման սկզբունքները և օրենսդրական հիմքերը……...5

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք……7

ՀՀ կառավարության N 1204-Ն որոշում……..……8

«Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1521-Ն որոշում……10

ԲԱԺԻՆ Բ. Պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի գնահատման արդյունքները……..……...12

Գործունեության տարեկան հաշվետվությունները……16

Բյուջե, բյուջեի կատարման հաշվետվությունները……19

Տեղեկություն տնօրինողի կառուցվածքի մասին տվյալներ……..……25

Հաստիքացուցակների……..……..……26

ՏԱ ապահովման գործառույթներն իրականացնող պատասխանատու անձի մասին տեղեկություններ……..……..……28

Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն……32

Տեղեկատվության ազատության վերաբերյալ առանձին բաժին……36

Հաճախակի տրվող հարցերի բաժին……38

Տեղեկություն տնօրինողին ուղղակիորեն առցանց հարցում ներկայացնելու հնարավորություն……..……39

ԲԱԺԻՆ Բ. Եզրահանգում և առաջարկություններ……..……...46

Պրոակտիվ հրապարակման ապահովումը պաշտոնական ինտերնետային կայքերում

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Ներածություն

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և պատկանում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների թվին: Այս իրավունքի իրավական պաշտպանությունը հնարավորություն է տալիս ազատորեն փնտրել և ստանալ տեղեկություններ: Հետևաբար, տեղյակ լինելով սեփական իրավունքների մասին՝ մարդիկ հնարավորություն են ունենում լիարժեք գործադրել և պաշտպանել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները: Այս իրավունքն ապահովում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

> «Սեփական նախաձեռնությամբ և ըստ անհրաժեշտության, հանրային մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի իր տնօրինման տակ գտնվող ընդհանուր հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը հանրայնացնելու համար՝ հրապարակայնությանը և հանրային կառավարման արդյունավետությանը նպաստելու և հանրության իրազեկ մասնակցությունը խթանելու նպատակով»:
>
> *Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին ԵԽ կոնվենցիա*

Տեղեկատվության ազատության կարևորագույն տարրերից է պրոակտիվ հրապակման սկզբունքը: Այս սկզբունքի էությունն այն է, որ տեղեկություն տնօրինող մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց գործունեությանն առնչվող տեղեկություններ՝ օգտագործելով նաև նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:

Տեղեկատվության ազատության պրակտիկան ցույց է տալիս, որ հասարակության համար առավել հեշտ ու արդյունավետ է ՏԱ իրավունքի իրականացումը, եթե պրոակտիվ հրապարակման գործառույթը պատշաճ կերպով է իրականացվում պետական մարմինների կողմից:

Պրոակտիվ հրապարակման գործառույթն օգտակար է առաջին հերթին նաև պետական մարմինների համար՝ այն նպաստում է խնայել պետական ռեսուրսները, տեխնիկական միջոցները և ժամանակը: Սրանից ածանցվող մյուս կարևոր պայմանն այն է, որ սեփական նախաձեռնությամբ հրապարակված տեղեկատվությունը պետք է իսկապես հասանելի ու մատչելի լինի մարդկանց համար:

Մոնիտորինգի նպատակը և խնդիրները

Այս մոնիտորինգի նպատակն է գնահատել, թե Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններն ինչպես են ապահովում պրոակտիվ հրապարակումը պաշտոնական ինտերնետային կայքերում, ամփոփել էլեկտրոնային տեղեկատվության ազատությանը վերաբերող ՀՀ օրենսդրության պահանջները և համապատասխան մարմիններին ներկայացնել անհրաժեշտ փոփոխությունների առաջարկների փաթեթ:

Մշտադիտարկման հիմնական խնդիրներն են.

- գնահատել տեղեկատվության ազատության ոլորտում տեղեկատվություն տնօրինող մարմինների ակտիվությունը և սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակումը պաշտոնական ինտերնետային կայքերում:
- գնահատել ՀՀ պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերը՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և նախապես մշակված չափորոշիչների հիման վրա,
- վեր հանել ՏԱ օրենսդրության կիրառմանը խոչընդոտող խնդիրները և բացթողումները,
- ներկայացնել համապատասխան առաջարկներ ուղղված պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակությանը:

Մոնիտորինգն իրականացվել է 2016թ.-ի նոյեմբեր- 2017թ.-ի հունվար ժամանակաշրջանում:

Մոնիտորինգում ընդգրկվել են պետական կառավարման կենտրոնական **37 մարմին**, դրանք են.

- ՀՀ կառավարության աշխատակազմ
- 18 նախարարություններ՝ http://gov.am/am/structure/
- 8 Կառավարությանն առընթեր մարմիններ՝ http://gov.am/am/adjunct-bodies/
- 10 մարզպետարաններ՝ http://gov.am/am/regions/

Մոնիտորինգի մեթոդաբանությունը

Մոնիտորինգն իրականացվել է երկու հիմնական մեթոդով՝ տեղեկություն տնօրինողների պաշտոնական ինտերնետային կայքերի ուսումնասիրությամբ և հարցազրույցների անցկացմամբ: ՏԱ ապահովումը սեփական նախաձեռնությամբ՝ պրոակտիվ հրապարակումը գնահատելու համար ուսումնասիրվել են պետական կառավարման 37 մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերը: Արդյունքում գնահատվել է հրապարակվող տեղեկության բովանդակության համապատասխանությունը ՏԱ օրենսդրության պահանջներին:

Գնահատումն իրականացվել է հետևյալ սկզբունքներով՝

- **Օրենսդրությամբ պահանջված տեղեկության առկայությունը / բացակայությունը**,
- **Տեղեկության ամբողջականությունը և ճշգրտությունը.** պաշտոնական կայքում տեղադրված տեղեկության բովանդակությունը պետք է արտացոլի այս կամ այն չափորոշիչի մասին ամբողջ անհրաժեշտ տեղեկատվական ծավալը: Օրինակ, հաշվետվությունները պետք է կայքում տեղադրված լինեն ամբողջությամբ, այլ ոչ թե քաղվածքների տեսքով: Օրինակ, եթե պետական մարմինը նախորդող ժամանակաշրջանում պատրաստել է հինգ հաշվետվություն, ապա բոլոր հինգն էլ պետք է տեղադրված լինեն պաշտոնական կայքում,
- **Թարմացումը և օպերատիվությունը**. պաշտոնական կայքերում տեղեկության նորության աստիճանը, դրա թարմացման հաճախականությունը:
- **Մատչելիությունը.** փաստաթղթերի մատչելիությունը, որոնման հարմարությունը, փաստաթղթի ներբեռնման ձևաչափը, ինչը օգտագործողներին հնարավորություն է տալիս հետագայում օգտագործելու այդ տեղեկությունը:

Մոնիտորինգի կառուցվածքը.
Մոնիտորինգը բաղկացած է երեք հիմնական բաժիններից.

Ա. Սեփական նախաձեռնությամբ պաշտոնական տեղեկատվության տրամադրման սկզբունքները և օրենսդրական հիմքերը
Բ. Մոնիտորինգում ընդգրկված մարմինների պաշտոնական կայքերի գնահատման արդյունքները
Գ. Եզրահանգում և առաջարկություններ

ԲԱԺԻՆ Ա

Սեփական նախաձեռնությամբ պաշտոնական տեղեկատվության հրապարակման սկզբունքները և օրենսդրական հիմքերը

Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի պատշաճ օրենսդրական կարգավորման և իրականացման մեխանիզմների բացակայության պայմաններում մարդու համար էապես կդժվարանա նաև այլ իրավունքների իրականացումը: Կարևորելով տեղեկություն ստանալու իրավունքը՝ ամբողջ աշխարհում, ինչպես նաև մեր երկրում, ընդունվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ իրավական ակտեր («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք), ՏԱ իրավունքն ամրագրվել է սահմանադրություններում (ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներ), միջազգային իրավական ակտերում:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին ԵԽ կոնվենցիան (2008թ.) ակտիվ հրապարակայնությունը սահմանում է որպես տեղեկատվության մատչելիության սկզբունքներից մեկը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Սեփական նախաձեռնությամբ և ըստ անհրաժեշտության, հանրային մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի իր տնօրինման տակ գտնվող ընդհանուր հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը հանրայնացնելու համար՝ հրապարակայնությանը և հանրային կառավարման արդյունավետությանը նպաստելու և հանրության իրազեկ մասնակցությունը խթանելու նպատակով»:

Կոնվենցիայի պարզաբանման հաշվետվության մեջ բացատրվում է, թե որն է «ընդհանուր հետաքրքրության պաշտոնական փաստաթուղթը»: Դրանք այն տեղեկություններն են, որոնք պետք է հրապարակվեն առանց տեղեկություն ստանալու հարցման կարիքի, ինչպիսիք են՝ կառուցվածքին, անձնակազմին, բյուջեին, գործունեությանը, կանոններին, քաղաքականությանը, որոշումներին, պետական մարմնի լիազորությունների պատվիրակմանը, տեղեկություն ստանալու իրավունքին, և պաշտոնական փաստաթղթեր ու հանրային հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ տեղեկություն ստանալու ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերը: Բոլոր այն փաստաթղթերը, որոնք ապահովում են, որ քաղաքացիները կարծիք ձևավորեն իրենց ղեկավարող մարմինների մասին, և մասնակից լինեն որոշումների կայացման գործընթացին, պետք է հրապարակվեն պետական մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Կոնվենցիայի պարզաբանման հաշվետվությունը անդամ պետություններին խորհուրդ է տալիս ազգային օրենսդրությամբ պրոակտիվ հրապարակման կանոններ սահմանել՝ այդպիսով նաև խթանելով առանց հարցումների տեղեկությունները մատչելի դարձնելու քաղաքականությունը:

ՀՀ կառավարությունը անդամակցում է **Բաց կառավարման գործընկերության միջազգային նախաձեռնությանը** 2011 թվականից ի վեր[1]: ԲԿԳ նախաձեռնությունը մշակել և լայնորեն տարածել է բաց կառավարման չափանիշներ: Այս չափանիշների կարևորագույն մասը վերաբերում է պրոկատիվ հրապարակման սկզբունքին՝ Տեղեկատվության Պրոակտիվ հրապարակման չափանիշներ: Դրանք են.

- **կազմակերպական/ինստիտուցիոնալ տեղեկատվություն** - տեղեկություն տնօրինողի գործունեության իրավական հիմքերը, ներքին կանոնակարգը, գործառույթները և լիազորությունները,
- **կազմակերպչական/կառուցվածքային տեղեկատվություն** - կազմակերպության կառուցվածքը, տեղեկատվություն անձնակազմի մասին, պետական պաշտոնյաների անունները և կոնտակտային տվյալները,
- **գործառնական տեղեկատվություն** - ռազմավարություններ և պլաններ, քաղաքականություն, գործողություններ, ընթացակարգեր, հաշվետվություններ, և կատարողականի գնահատում՝ ներառյալ փաստացի վերլուծություններ և այլ փաստաթղթեր և տվյալներ, որոնց հիման վրա քաղաքականություն է ձևավորվում,
- **որոշումներ ու ակտեր**- այդ թվում տվյալներ և փաստաթղթեր, որոնք հիմնավորում են որոշումների ու ակտերի անհրաժեշտությունը,
- **հանրային ծառայությունների մասին տեղեկատվություն** - տեղեկություն տնօրինողի կողմից մատուցվող ծառայությունների նկարագրություն, ձեռնարկներ և ուղեցույցներ, վճարների մասին տեղեկատվություն, վճարումներ կատարելու ձևաթղթերը,
- **բյուջեի մասին տեղեկատվություն** - բյուջեի ընթացակարգ, բյուջեի նախագիծ, բյուջե, ֆինանսական հաշվետվություններ՝ ներառյալ հանրային հաստատությունում աշխատավարձը, աուդիտորական հաշվետվությունները,
- **բաց/հանրային հանդիպումների մասին տեղեկատվություն** - թեման, ժամը, օրակարգը, հանրային քննարկումների մասին տեղեկատվությունը ու դրանց մասնակցության պայմանները,
- **որոշումների կայացում և հանրային մասնակցություն** - որոշումների կայացման ընթացակարգերի մասին տեղեկատվություն, այդ թվում հանրային խորհրդատվությունների և մասնակցության գործընթացի մեխանիզմներ,
- **սուբսիդիաների մասին տեղեկատվություն** - ֆինանսավորում ստացած անձանց, սուբսիդիաների/ֆինանսավորման նպատակների, և վճարվող գումարների մասին,
- **հանրային գնումների մասին տեղեկատվություն**- մրցույթի ընթացակարգի, ընտրության չափանիշների, մրցույթի արդյունքների, ստորագրված պայմանագրերի և կատարողական հաշվետվությունների մասին,
- **տեղեկատվության ծավալները և ռեսուրսները** - տեղեկատվական ռեսուրսների, ինդեքսների նկարագրությունը, հանրային ռեեստրների ցանկերը եւ դրանց նկարագրությունը, դրանց հասանելիության ընթացակարգերը՝ ներառյալ առցանց ռեեստրները և տվյալների բազաները,
- **տեղեկություն տնօրինողի կողմից ստեղծված և տնօրինողի մոտ պահվող տեղեկությունների/ փաստաթղթերի ռեեստրները,**

[1] http://ogp.am/hy/about-project/

- **տեղեկություն տնօրինողի տպագրությունների/հրապարակումների մասին,**
- **տեղեկատվություն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին** - ինչպե՞ս դիմել տեղեկատվություն ստանալու համար՝ ներառյալ յուրաքանչյուր մարմնում պատասխանատու անձի կոնտակտային տվյալները:

Այս ցանկում նշված տեղեկությունների զգալի մասն արդեն ներառված է ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածում:

1. **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի** առանձնահատկություններից մեկն այն է, որ այն սահմանում է տեղեկատվություն տնօրինողի կողմից անհապաղ կամ առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակման տեղեկությունների ցանկ: Այդպիսի տեղեկություններ են, օրինակ, հանրության համար իրականացվող աշխատանքներն ու ծառայությունները, բյուջեները, հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տրամադրման կարգը, տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը և այլն: 7-րդ հոդվածում ամրագրված է 13 խումբ տեղեկությունների պրոակտիվ հրապարակման պահանջ: Այդ 13 անուն տեղեկություններն են՝

«1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,

2) բյուջեն,

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,

4) հաստիքացուցակները, ինչպես նաև՝ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները,

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը,

7) հասարակական միջոցառումների ծրագրերը,

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները»:

Օրենքի այս հոդվածը սահմանում է, որ վերոհիշյալ տեղեկությունները «հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով» (*ընդգծումը հեղինակինն է):*

ՏԱ մասին օրենքը նաև հստակեցնում է, թե ինչ պարբերականությամբ պետք է պարտադիր հրապարակման տեղեկությունները մատչելի դարձվեն հանրության համար: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է.

> «Տեղեկություն տնօրինողը ….. տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները»:

Իսկ 4-րդ կետի համաձայն՝

«Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում»:

2. 2016թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել **«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1204-Ն որոշումը,** [2] (այսուհետ՝ Կարգ կամ N 1204-Ն որոշում) որով նախատեսվում են պրոակտիվ հրապարակայնության խթմանման լրացուցիչ երաշխիքներ:

[2] http://www.arlis.am/documentview.aspx?docID=101115

Կարգը նախատեսում է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը որևէ հարցի վերաբերյալ հաճախ է ստանում հարցումներ, ապա պետք է դրանք ամփոփի ու տեղադրի իր պաշտոնական կայքում: Որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը սահմանում է.

> «Տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքը պետք է ունենա «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ հրապարակվում են պարբերաբար (հինգ և ավելի անգամ) տրված միևնույն հարցերը և դրանց պատասխանները»:

Վերընշված Կարգով Գործադիրը նաև պահանջ է դնում ապահովել պաշտոնական կայքերի միջոցով հարցում ուղարկելու հնարավորությունը, ընդ որում, այդ բաժինները պետք է նաև ապահովեն հարցման տեքստը կցելու հնարավորություն: ՀՀ կառավարության N 1204-Ն որոշման[3] մեջ անմիջականորեն նշվում է, որ

> «...3. Տեղեկատվություն տնօրինողներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել իրենց պաշտոնական կայքերում (առկայության դեպքում) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը»:

Ոռշման 1-ին Հավելվածի 6-րդ կետը սահմանում է՝

> «...6. Տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում պետք է առկա լինի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ, ելնելով գործունեության առանձնահատկություններից, պետք է տեղադրվեն տեղեկատվություն տնօրինողին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկություն ստանալու մասին հարցումների օրինակելի ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ ցուցումները:»

Իսկ 7-րդ կետը հավելում է, որ

> «....պաշտոնական կայքի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելուց հետո՝ ստորագրությամբ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով տվյալ մարմին ուղարկված հարցումները, ստացման օրը, տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին համապատասխան, մուտքագրվում են տվյալ տեղեկատվությունը տնօրինողի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և շրջանառվում այդ կարգի համաձայն: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բացակայության դեպքում հարցումները շրջանառվում են տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին

[3] http://www.arlis.am/documentview.aspx?docID=101115

համապատասխան: Դիմողն առցանց եղանակով կարող է հետևել իր հարցման ընթացքին… »:

Այսպիսով, Կարգը որպես հարցում ուղարկելու եղանակ է դիտում նաև էլեկտրոնային փոստը կամ պաշտոնական կայքերի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից հարցման ուղարկումը: Սա դրական մեծ առաջընթաց կարձանագրի տեղեկատվության ազատության ոլորտում՝ խնայելով ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիների ժամանակն ու միջոցները, տեղեկություն տնօրինող պետական մարմինների հետ փոխհարաբերությունները կդարձնի առավել արդյունավետ և պարզ:

3. Հայաստանի Հանրապետությունը, 2011 թվականից միանալով ԲԿԳ միջազգային նախաձեռնությանը, ոչ միայն ստանձնեց ապահովել ԲԿԳ ընդհանուր սկզբունքների կատարումը, այլև դրանք արտացոլել Կառավարության երկամյա Գործողությունների ծրագրերում: Այսպես, ԲԿԳ հայաստանյան Գործողությունների առաջին ծրագրով[4] ՀՀ կառավարությունը ստանձնեց Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում հանձնառությունը: Արդյունքում, 2013 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունեց **«Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում կամ N 1521-Ն որոշում)[5]:**

Որոշման ընդունումը միտված էր պետական ինտերնետային կայքերի միասնական կառուցվածքի, պետական կայքերում անհրաժեշտ տեղեկությունների հրապարակման և թիրախային խմբերի համար կայքերի արդյունավետ կիրառելիության ապահովմանը:
Որոշման մեջ ամրագրված է, որ՝

- **Պետական մարմինները պարտավոր են ունենալ պաշտոնական կայք**՝ իրենց գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար:
- Պաշտոնական կայքում տեղադրված **տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի, ամբողջական և անվճար:**
- Պետական մարմիններն իրենց պաշտոնական կայքերում պարտավոր են տեղադրել տեղեկատվություն իրենց կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների մասին:

Որոշման 9-րդ կետով սահմանված է 29 խումբ տեղեկություն, որ պետք է հրապարակվեն պաշտոնական կայքերում: Դրանց մեջ ներառված են ինչպես ՏԱ օրենքով նախատեսված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, այնպես էլ օրինակ՝ պետական

[4] http://ogp.am/u_files/file/OGP_ACTION%20PLAN_Arm.pdf
[5] http://mtcit.am/edfiles/files/voroshumner/1521k.pdf

մարմինների պաշտոնատար անձանց և պաշտոնական պատվիրակությունների այցերի և աշխատանքային գործուղումների մասին տեղեկությունները, և կամ՝ «պետական մարմիններում գործող տվյալների շտեմարանների, ռեգիստրների և ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգերից, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող տեղեկատվական ռեսուրսների ու ծառայությունների ցանկը և դրանից օգտվելու հրահանգները»:

Որոշումն ընդունվեց, սակայն այն գործնականում չիրականացվեց. պետական մարմինների ինտերնետային կայքերից և ոչ մեկը լիարժեքորեն չի ապահովում դրա պահանջները:

ԲԱԺԻՆ Բ

Պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի գնահատման արդյունքները

Պետական կայքերն այսօր աշխարհում կիրառվում են որպես պաշտոնական տեղեկատվության պրոակտիվ տրամադրման ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Ինտերնետային կայքերն ինքնանպատակ չեն կարող լինել, դրանք պետք է ծառայեն մեկ առանցքային նպատակի՝ պաշտոնական տեղեկատվության լիարժեք, մատչելի, արագ տրամադրմանը, ինչպես նաև ապահովեն տեղեկությունների տրամադրման և ստացման առցանց գործիքներ, դրանով կրճատելով քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների և առաջարկությունների պատասխանների թղթային առաքման համար անհրաժեշտ ժամանակային և նյութական միջոցները:

Հատկանշական է, որ վերջին տարիներին պաշտոնական ինտերնետային կայքերը բարելավել են իրենց բովանդակությունները: Սա մի կողմից պայմանավորված է վերոնշյալ նորմատիվ ակտերի պահանջներից, մյուս կողմից նաև հանրության պահանջի ավելացմամբ: Ինտերնետ օգտագործողների թիվը հանրապետությունում աճում է, հետևապես առավել հաճախ մարդիկ տեղեկություններ փնտրում և ստանում են պաշտոնական ինտերնետային կայքերից:

Այնուհանդերձ, դեռևս լիարժեքորեն չեն ապահովվում ՏԱ օրենսդրության պահանջները, և ինչպես ստորև բերված արդյունքներն են վկայում, պետական մարմինները լուրջ և հետևողական աշխատանքի կարիք ունեն՝ ուղղված պաշտոնական կայքերի բովանդակության ամբողջականության, լիարժեքության և մատչելիության ապահովմանը:

Այս զեկույցում դիտարկել ենք ՀՀ պետական կառավարման 37 մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերը՝ որպես տեղեկատվության տրամադրման պրոակտիվ հրապարակման առավել արդյունավետ գործիք:

Այսպես, ուսումնասիրվել են պետական կառավարման 37 մարմինների՝ ՀՀ կառավարության աշխատակազմի, 18 նախարարությունների, 8 Կառավարությանն առընթեր մարմինների և 10 մարզպետարանների ինտերնետային պաշտոնական կայքերը, դրանք են.

	Ինտերնետային կայքի հասցեն	**Գերատեսչության անվանումը**
1.	http://www.gov.am/	ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ
	Նախարարություններ	
1	http://www.mieir.am/	Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն
2	http://www.mlsa.am/	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
3	http://www.moh.am/	Առողջապահության նախարարություն
4	http://www.moj.am/	Արդարադատության նախարարություն
5	http://www.mes.am	Արտակարգ իրավիճակների նախարարություն
6	http://www.mfa.am	Արտաքին գործերի նախարարություն
7	http://www.mnp.am	Բնապահպանության նախարարություն
8	http://www.minagro.am/	Գյուղատնտեսության նախարարություն
9	http://www.minenergy.am	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
10	http://www.edu.am	Կրթության և գիտության նախարարություն
11	http://www.mincult.am	Մշակույթի նախարարություն
12	http://www.mil.am/	Պաշտպանության նախարարություն
13	http://www.msy.am	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
14	http://www.mindiaspora.am/	Սփյուռքի նախարարություն
15	http://www.mtad.am/hy/	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
16	http://www.mineconomy.am	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
17	http://www.mtc.am	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
18	http://www.minfin.am/	Ֆինանսների նախարարություն

	Կառավարությանն առընթեր մարմիններ	
19	http://www.sns.am	Ազգային անվտանգության ծառայություն
20	http://www.cadastre.am	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
21	http://www.police.am	ՀՀ ոստիկանություն
22	http://www.anra.am/	Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե
23	http://www.spm.am	Պետական գույքի կառավարման վարչություն
24	http://www.customs.am, http://www.taxservice.am	Պետական եկամուտների կոմիտե
25	http://minurban.am/am/	Քաղաքաշինության պետական կոմիտե
26	http://www.aviation.am/	Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
	Մարզպետարաններ	
27	http://aragatsotn.mtad.am/	Արագածոտնի մարզպետարան
28	http://ararat.mtad.am/	Արարատի մարզպետարան
29	http://armavir.mtad.am/	Արմավիրի մարզպետարան
30	http://gegharkunik.mtad.am/	Գեղարքունիքի մարզպետարան
31	http://lori.mtad.am/	Լոռիի մարզպետարան
32	http://kotayk.mtad.am/	Կոտայքի մարզպետարան
33	http://shirak.mtad.am/	Շիրակի մարզպետարան
34	http://syunik.mtad.am	Սյունիքի մարզպետարան
35	http://vdzor.mtad.am	Վայոց Ձորի մարզպետարան
36	http://tavush.mtad.am/	Տավուշի մարզպետարան

Ուսումնասիրության ընթացքում գնահատվել է անհրաժեշտ տեղեկության՝

1. **Առկայությունը:**
2. **Լիարժեքությունը.** արդյոք առկա տեղեկությունն ամբողջական է և թարմացված: Շատ են օրինակները, երբ, օրինակ, կայքի Բյուջե բաժնում հրապարակված է մեկ փաստաթուղթ, այն էլ նախորդ տարիների, և կամ թարմացված չեն տեղեկություն ստանալու հարցման ձևանմուշի մեջբերված սահմանադրական նորմերը:
3. **Մատչելիությունը.** Արդյոք տեղադրված տեղեկությունները արագ հասանելի՞ են, դրանք տեղադրվա՞ծ են առանձնացված բաժնում: Արդյոք տեղադրված փաստաղթղերի ֆորմատը թույլ է տալիս օգտագործել առկա տվյալները: Օրինակ՝ շատ դեպքերում վիճակագրական տվյալներ պարունակող փաստաթղթերը, բյուջեները կամ հաշվետվությունները ներկայացված են pdf ֆորմատով առանց պատճենահանման (copy) հնարավորության, այնինչ ողջունելի է word, excel ֆորմատի ֆայլերի տեղադրումը, որպեսզի փաստաղթղերում առկա տվյալները օգտագործելի լինեն ուսումնասիրությունների, մեջբերումների կամ հղումների համար:

Այս երեք չափանիշներն իրար լրացնող են, քանի որ տեղեկության առկայությունը դեռևս բավարար չէ: Ուսումնասիրության ընթացքում գնահատվել է անհրաժեշտ տեղեկությունների առկայությունը, լիարժեքության և մատչելիության չափանիշների հետ զուգակցելով:

Գնահատվել են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի պահանջով, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N1521-Ն և 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N1204-Ն որոշումներում ամրագրված պարտադիր հրապարկման ենթակա տեղեկություններից կարևորագույնների հրապարակումները (առ 2017թ.-ի հունվարի 31-ը)՝

1. գործունեության մասին հաշվետվությունները,
2. բյուջե, բյուջեի կատարման հաշվետվությունները,
3. տեղեկություն տնօրինողի կառուցվածքի մասին տվյալներ,
4. կառուցվածքը, հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց հետ կապի միջոցները.
5. հաստիքացուցակների հրապարակում,
6. ՏԱ պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկություններ,
7. տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն,
8. ՏԱ առանձին բաժին,
9. Հաճախակի տրվող հարցերի բաժին,
10. տեղեկություն տնօրինողին ուղղակիորեն առցանց հարցում ներկայացնելու հնարավորություն:

Այսպես.

1. Տեղեկություն տնօրինողի գործունեության տարեկան հաշվետվությունները[6].

Դիտարկված 37 մարմիններից 30-ի պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակված են մարմնի գործունեության հաշվետվությունները, 7-ը՝ չեն հրապարակել:

Աղյուսակ 1. Տեղեկություն տնօրինողը կայքում ներկայացրե՞լ է իր գործունեության տարեկան հաշվետվությունները.



Պետական մարմինների գործունեության մասին հաշվետվությունների հրապարակումներում մեծիմասամբ ապահովված է լիարժեքությունն ու մատչելիությունը, ընդ որում մարմիններից մի քանիսը դրանք հրապարակում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքներով: Օրինակ՝ Կրթության և գիտության կամ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունները[7]:

Հիմնականում դրանք հրապարակված են կայքերի *Հաշվետվություններ* առանձին բաժնում, որը հեշտացնում է փաստաթղթի գտնելը: Սակայն մի քանի կայքերում այս բաժնում տեղադրված են բոլոր տեսակի հաշվետվությունները՝ գործունեության մասին, բյուջեի կատարողականի, դիմումների ու հարցումների վերաբերյալ, աուդիտի, ստուգումների մասին և այլ հաշվետվություններ: Օրինակ՝ Առողջապահության նախարարության կայքում[8]: Այս դեպքում խառնաշփոթ է ստեղծված, օգտագործողի համար դժվարամատչելի է դառնում անհրաժեշտ տեղեկությունը:

Մեկ այլ դեպքում, օրինակ, Տնտեսական զարգացման և ներդրումների կայքի Հաշվետվություններ բաժինը[9] բավականաչափ հագեցած է փաստաթղթերով, սակայն այստեղ

[6] Արդյունքները ներկայացված են առ 2016թ.-ի դեկտեմբերի 31-ը:
[7] http://edu.am/index.php/am/documents/index/150, http://www.mtad.am/hy/reports/
[8] http://moh.am/?section=static_pages/index&id=607
[9] http://www.mineconomy.am/arm/117/free.html

տեղադրված pdf ֆորմատի հաշվետվությունները պատճենահանման (copy) հնարավորություն չեն տալիս, ինչը թույլ չի տալիս օգտվել այդ տվյալներից հետագա ուսումնասիրությունների, դիտարկումների կամ մեջբերումների համար:

Բոլոր 10 մարզպետարանների կայքերն էլ ունեն Հաշվետվություններ բաժինը, որտեղ հրապարակված են մարզպետարանների գործունեության տարեկան հաշվետվությունները: Իսկ օրինակ Տավուշի մարզպետարանը ոչ միայն ամսական կտրվածքով է հրապարակել մարզպետարանի, մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների և այլ ծրագրերի ֆինանսավորման մասին հաշվետվությունները, այլև հրապարակել է աշխատակազմի յուրաքանչյուր բաժնի գործունեության տարեկան հաշվետվությունները[10]: Լոռու մարզպետարանը հրապարակել է նաև իր գործունեության հաշվետվություններն ըստ բնագավառների[11] :

Պատկերն այլ է Կառավարությանն առընթեր մարմինների կայքերում: 8 ԿԱ մարմիններից 3-ում՝ ԱԱԾ, Միջուկային անվտանգության և Կադաստրի պետական կոմիտե, չկան հրապարակված մարմնի գործունեության մասին հաշվետվությունները:

Անշարժ գույքի պետական կադաստրի պետական կոմիտեն իր կայքի Հաշվետվություններ բաժնում հրապարակել է միայն Կոմիտեի տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություն[12]: Հատկանշական է, որ կայքում զետեղված են Կոմիտեի ղեկավարության տակ գործող Գեոդեզիայի և հողային պետական տեսչություն եռամսակային և տարեկան հաշվետվությունները, իսկ հենց Կոմիտեի ամբողջական գործունեության մասին տեղեկություններ չկան:

Կարևոր է, որ կայքերում հրապարակվող տեղեկությունները, տվյալները լինեն թարմ, և յուրաքանչյուր փոփոխություն թարմացվի, մինչդեռ դիտարկված մարմինների կայքերում գործունեության մասին ամենաթարմ հաշվետվությունը հրապարակել է միայն Պետական գույքի կառավարման վարչությունը՝ 2016թ.-ի առաջին 9 ամիսների վերաբերյալ[13]:

Իսկ Կառավարության կայքում բավականին հին փաստաթուղթ է տեղադրված, այստեղ ՀՀ Կառավարության գործունեության մասին վերջին հաշվետվությունը 2008-2011 թվականներինն է[14], իսկ Կառավարության աշխատակազմի գործունեության մասին որևէ տեղեկություն չկա:

[10] http://tavush.mtad.am/reports/
[11] http://lori.mtad.am/sphears/
[12] http://www.cadastre.am/page/416
[13] Նշենք, որ տվյալները բերված են 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:
[14] http://report.gov.am/

Գործառույթների մասին տեղեկություններ

Դիտարկվող 37 պետական կառավարման մարմինների կայքերից 35-ը հրապարակել են իրենց գործառույթների մասին տեղեկությունները: Դրանք հիմնականում տեղադրված են Մեր մասին/նախարարություն/մարզպետարան բաժիններում: Հիմնական մասը տեղադրել է նաև մարմնի Կանոնադրությունը, որով հստակ սահմանված են մարմնի գործառույթներն ու լիազորությունները: Բացառություն են Ազգային անվտանգության ծառայության և Պաշտպանության նախարարության կայքերը: Հարկ է նշել, որ Ազգային անվտանգության ծառայության և պաշտպանության նախարարության ինտերնետային կայքերում շատ տեղեկություններ բացակայում են օրենքով սահմանված կարգով՝ ելնելով այս մարմինների առանձնահատկություններից դրանց տնօրինման տակ եղած տեղեկությունը համարվում է պետական գաղտնիք: Ուսումնասիրության առանձին բաժիններում կանդրադառնանք այս մարմինների թափանցիկության և տեղեկատվության ազատության ապահովման խնդիրներին, սակայն նշենք, որ շատ հաճախ «պետական գաղտնիք» անհիմն պատճառաբանությամբ չեն հրապարակվում կամ չեն տրամադրվում անհրաժեշտ տեղեկությունները, որոնք,օրինակ հրապարակված են այլ պաշտոնական աղբյուրներում:

Աղյուսակ 2. Տեղեկություն տնօրինողը կայքում ներկայացրե՞լ է իր գործառույթները



Թեև դիտարկված կայքերի մեծ մասում հրապարակված են մարմինների գործունեության մասին հաշվետվությունները, սակայն դրանք լիարժեք չեն կարող համարվել՝ կամ թարմացված չեն, կամ դժվար գտնվող են, կամ օգտագործելի չեն: Հետևապես, Կայքի Հաշվետվություններ բաժնում կարելի է առանձնացնել Գործունեության հաշվետվություններ ենթաբաժինը և այստեղ հրապարակել word ֆորմատով բոլոր տարիների փաստաթղթերը, ապահովել դրանց թարմացումը:

2. Բյուջե, բյուջեի կատարման հաշվետվությունները

37 մարմիններից 11-ը պաշտոնական ինտերնետային կայքերում չեն հրապարակել իրենց մարմինների պետական բյուջեի հատկացումների վերաբերյալ տեղեկությունները:

Աղյուսակ 3. Տեղեկություն տնօրինողները հրապարակե՞լ են բյուջետային հատկացումների մասին փաստաթուղթ



Գերատեսչությունների բյուջեների և դրանց կատարման հաշվետվությունների հրապարակման կարևորությունը բխում է առաջին հերթին պետական մարմնի հաշվետվողականության ապահովման պահանջից: Որպեսզի հանրությունը տեղյակ լինի, թե պետական միջոցներն ինչ արդյունավետությամբ և ինչ ուղղություններով են ծախսվում, ոչ միայն անհրաժեշտ է հրապարակել մարմնի բյուջեն, այլև՝ դրանց կատարման հաշվետվությունները: Ընդ որում, տվյալները պետք է ներկայացվեն այնպիսի ձևաչափով (օրինակ Excel ֆայլերով), որպեսզի օգտագործողը կարողանա օգտվել այդ տեղեկությունից՝ ուսումնասիրություններ կամ համեմատություններ անելիս:

Դեռևս 2011 թվականից էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում գործարկված Ինտերակտիվ բյուջեն՝ հնարավորություն է տալիս տեղեկանալու թե պետական բյուջեի միջոցները ինչ ուղղություններով են բաշխվել և ծախսվել: Սակայն ՏԱ օրենսդրությունը պահանջում է, որ յուրաքանչյուր գերատեսչություն հրապարակի նաև իր գերատեսչական բյուջեն և դրա կատարման հաշվետվությունները:

Բյուջեների հրապարակման աստիճանը գնահատվել է հետևյալ սանդղակով՝

- **Տեղեկության առկայության- 30% առավելագույն միավորը**

Գնահատվել է կայքում բյուջեի համար առանձնացված էջի և այնտեղ տեղադրված փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը: Օրինակ, թեև **ՀՀ Միջազգային**

տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կայքում առկա է Բյուջե անվամբ էջ, սակայն այն ակտիվ չէ, հետևապես այն գնահատվել է 0%:

- **Տեղեկության հավաստիությունը, լիարժեքությունը և թարմացումը – 40% առավելագույն միավորը**

Այստեղ հաշվի է առնվել փաստաթղթերի լիարժեքությունը, արդյոք առկա՞ են կայքի գործարկման թվականից մինչև 2016թ.-ի՝ մարմնի հաստատված բյուջեները: Նշենք, որ 2016թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմը և նախարարություններից և ոչ մեկը կայքում չեն հրապարակել 2017թ.-ի համար հատկացված բյուջեները:

- **Տեղեկատվության մատչելիությունը- 30% առավելագույն միավորը**

Հաշվի է առնվել, թե որքանով է տեղեկությունը հասանելի, մատչելի օգտագործողի համար: Օրինակ՝ չնայած բյուջեների փաստաղթղերն առկա են, սակայն դրանք տեղադրված են այնպիսի տառատեսակով, որ չեն կարդացվում, կամ փաստաթուղթը փակ է օգտագործման համար՝ առանց Copy-paste- ի հնարավորության է: Թվային տվյալներով տեղեկությունների համար լավագույն տարբերակը Excel ֆորմատով տեղադրված նյութերն են, որոնք կարելի է ներբեռնել և օգտագործել: Մատչելիության առումով հաշվի է առնվել նաև փաստաթղթերի տեղադրման հերթականությունը. լավագույն տարբերակն է, երբ ցանկում պետք է առաջինը տեղադրվեն վերջին, թարմացված փաստաղթղերը և ըստ նվազման թվականների ցանկը շարունակվի վերևից ներքև, որպեսզի մուտք գործելով տվյալ էջը առաջինը երևան վերջին ներմուծված և ամենաթարմ տեղեկությունները: Այնինչ, օրինակ, **ՀՀ կրթության և գիտության և էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների** կայքերում սկզբում երևում են նախորդ տարիների փաստաթղթերը, և միայն էջի ներքևում՝ վերջին, թարմացված նյութերը[15]:

[15] http://edu.am/index.php/am/about/view/78 , http://www.minenergy.am/page/392

Բյուջեի հրապարակումը ՀՀ կառավարության աշխատակազմի և նախարարությունների կայքերում



Ինչպես երևում է աղյուսակից՝ **ՀՀ կառավարության աշխատակազմի, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, Բնապահպանության, Պաշտպանության, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների** կայքերում ընդհանրապես բացակայում են այդ մարմինների բյուջետային հատկացումների մասին տեղեկությունները: Ընդ որում՝ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների, Բնապահպանության նախարարությունների կայքերում Բյուջե անվամբ բաժինները կան, սակայն այնտեղ տեղադրված չեն փաստաթղթերը, իսկ վերջին երկուսի դեպքում պարզապես կայքերում առկա չեն համապատասխան բաժինները:

Մյուս բոլոր նախարարությունները համապատասխան բաժիններ և այդտեղ առկա փաստաթղթերի առկայության համար ստացել են առավելագույն՝ 30% գնահատականը:

Սակայն պատկերը փոխվում է այդ բաժիններում առկա փաստաթղթերի լիարժեքության և թարմացված լինելու աստիճանի գնահատման դեպքում: 2016թ.-ի դեկտեմբերի 26-ի դրությամբ մարմիններից և ոչ մեկը չի հրապարակել դեկտմբերի 8-ին ԱԺ կողմից ընդունված 2017թ.-ի հաստատված բյուջեները: Հետևապես այս բաժնում ի սկզբանե բոլորը ստացել են առավելագույն 40%-ից 35%, այնուհետև աստիճանաբար հանվել են միավորները՝ հաշվի առնելով փաստաթղթերի առկայությունն ըստ թվականների, օրինակ, **Մշակույթի նախարարությանը** տրվել է 35%, քանի որ կայքի համապատասխան բաժնում առկա են 2008թ.-ից մինչև 2016 թ.-ի բյուջետային հատկացումների մասին տվյալները: Իսկ **Ֆինանսների**

նախարարության 20% միավորը տրվել է կայքում միայն 2013 և 2014 թթ.-ի նախարարության բյուջեների մասին տեղեկությունները հրապարակած լինելու համար: Չնայած պետք է հավելել, որ նախարարության կայքում առանձին բաժին է Պետական բյուջեն, որտեղ հրապարակված է Ինտերակտիվ բյուջեն՝ բյուջետային հատկացումների և ծախսերի վերաբերյալ[16]:

Իսկ, **Արտաքին գործերի նախարարությունը** կայքի ԱԳՆ բյուջե էջում՝ հրապարակել է e-gov.am կայքում գործող «Ինտերակտիվ բյուջե 2016»-ի՝ նախարարությանը վերաբերող մասի **լուսանկարը՝** http://www.mfa.am/hy/budget/: Սա չի կարող համարվել լիարժեք և ՏԱ օրենսդրության պահանջին համապատասխան հրապարակում:

Բյուջեի հրապարակումը ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններում

Ի տարբերություն նախարարությունների, Կառավարությանն առընթեր 8 մարմիններից **միայն երկուսը՝ ՀՀ Ոստիկանությունը և Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն են հրապարակել բյուջեի մասին տեղեկություն**:



[16] http://minfin.am/minfin.am/index.php?cat=71&lang=1

Բյուջեի հրապարակումը ՀՀ մարզպետարանների պաշտոնական կայքերում



Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր մարզպետարանները հրապարակել են բյուջեները, սակայն այստեղ ևս դեկտեմբերի վերջի դրությամբ դեռևս հրապարակված չէ, գալիք՝ 2017թ.-ի հաստատված բյուջեն:

Հարկ է անդրադառնալ այստեղ հրապարակված փաստաթղթերի մատչելիության խնդրին: Հիմնականում միայն pdf ֆորմատով տեղադրված փաստաթղթեր են առանց պատճենահանման (copy) հնարավորության, իսկ օրինակ **Գեղարքունիքի մարզպետարանի** կայքի դեպքում pdf փաստաթուղթն անընթեռնելի է[17]: Շիրակի մարզպետարանին 2016 թվականին հատկացված ֆինանսական միջոցների մասին Excel ֆորմատով տեղադրված փաստաթուղթը յունիկոդով չէ, և տառատեսակը չի կարդացվում՝ ըստ էության տեղեկությունը դառնում է անհասանելի:

Բյուջետային հատկացումների ծախսերի/կատարողականների մասին հաշվետվությունների հրապարակում

37 մարմիններից 23-ը չեն հրապարակել պետական բյուջեից ստացված գումարների ծախսերի/կատարողականի մասին տեղեկություններ: Ընդ որում հրապարակվածներից մեծ մասն էլ ամբողջական և լիարժեք չէ: Այնինչ, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից առավել կարևոր է ներկայացնել, թե պետական միջոցները ինչպես, ինչ ուղղություններով են ծախսվել:

[17] http://gegharkunik.mtad.am/files/docs/18915.pdf

Աղյուսակ 4. Տեղեկություն տնօրինողները հրապարակե՞լ են բյուջետային հատկացումների կատարողականների մասին փաստաթուղթ



Թեև, օրինակ նախարարություններից մի քանիսը հրապարակել են բյուջեները, սակայն դրանց կատարման հաշվետվությունները չկան՝ օրինակ **Էներգետիկ ենթակառուցվածքների և ներդրումների** կամ **Գյուղատնտեսության** նախարարությունները: **Մշակույթի նախարարության** դեպքում[18] Հաշվետվություններ բաժնում Հավելվածներ rar. ֆորմատով մի շարք փաստաթղթեր են դրված, որոնց թվում նաև ֆինանսական ծախսերին վերաբերող փաստաթղթեր, սակայն ըստ էության դրանք մատչելի չեն, քանի որ օգտագործողը կոնկրետ բյուջետային ծախսերի մասին տեղեկություններ փնտրելիս ստիպված պետք է լինի 50-ից ավել փաստաթուղթ ներբեռնել, որպեսզի դրանց մեջ գտնի իր ուզածը:

Մամինների մի մասը բյուջետային միջոցների ծախսերի մասին հաշվետվությունները հրապարակել է ընդհանուր *Հաշվետվություններ* բաժնում՝ մարմնի գործունեության հաշվետվությունների հետ (օրինակ Տավուշի մարզպետարանի կայքում՝ http://tavush.mtad.am/reports/): Սա ընդունելի է, սակայն, կարծում ենք ճիշտ կլիներ բյուջեների կատարողականի մասին հաշվետվությունները հրապարակվեին բյուջեների հետ միասին, իրար հաջորդելով, որպեսզի օգտագործողին առավել հարմար լիներ նույն տեղից գտնել այդ տեղեկությունները, ինչպես շատ մարզպետարանների կայքերում է՝ օրինակ՝ Գեղարքունիքի մարզի կայքում[19]:

Կառավարությանն առընթեր մարմիններում, ինչպես բյուջեի հրապարակման, այնպես էլ դրանց կատարողականների հրապարակման դեպքում, պատկերը խիստ բացասական է: 8 մարմիններից ոչ մեկը չի հրապարակել պետական բյուջեի հատկացումների կատարողականի վերաբերյալ տեղեկություններ, միայն Ոստիկանությունն է, որ հրապարակել է[20] 2015թ.-ի արտաբյուջետային միջոցների տարեկան պլանի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն:

[18] http://mincult.am/reports.html
[19] http://gegharkunik.mtad.am/budget/
[20] http://www.police.am/about-the-police/budget.html

Աղյուսակ 5. Բյուջետայի հատկացումների կատարողականների հաշվետվությունների հրապարակումն ըստ մարմինների



Այսպիսով, դիտարկման արդյունքներից ակնհայտ է, որ ***պետական կառավարման մարմինների մեծ մասը լիարժեքորեն չի հրապարակում*** *հատկացված ֆինանսական միջոցների և դրանց ծախսերի մասին տեղեկությունները: Սա բավականին անհանգստացնող փաստ է. մարմնի թափանցիկության և հաշվետվողականության աստիճանի գնահատման առաջնային չափանիշներից է պետական միջոցների ծախսման թափանցիկ և հրապարակային գործունեությունը, այնինչ կայքերում այս տեղեկությունը հիմնականում առկա չէ, և կամ հին է ու ոչ մատչելի:*

3. Տեղեկություն տնօրինողի կառուցվածքի մասին տվյալներ

Դիտարկված 37 կայքերն էլ ունեն մարմինների կառուցվածքի մասին բաժիններ: Այս բաժիններն ամենաարագն են թարմացվում և գրեթե բոլորն էլ պարունակում են ամբողջական տեղեկություն մարմնի ղեկավար մարմնի, աշխատակազմի ստորաբաժանումների և մարմինների ենթակայության տակ գործող մարմինների մասին: Մարմինների մեծ մասը հրապարակել է ոչ միայն վարչությունների և բաժինների պետերի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, այլև մարմնի կանոնադրությունից բխող տվյալ վարչության գործառույթները, օրինակ՝ Կառավարության աշխատակազմը[21] կամ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը[22]:

Այս բաժնում են հրապարակված ղեկավար պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

[21] http://gov.am/am/staff-structure/info/74/
[22] http://www.mtad.am/hy/structure/info/83/

Պաշտպանության նախարարության կայքի կառուցվածք բաժինը, և ընդհանուր կայքը, օգտագործման համար բավականին բարդ է և շատ քիչ տեղեկություն է պարունակում: Նախարարի, տեղակալների, վարչությունների էջերում որևէ կոնտակտային հեռախոսահամար հրապարակված չէ: Նույնիսկ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հեռախոսահամարը կամ էլ. փոստը հրապարակված չեն[23]:

Ֆինանսների նախարարի և նրա տեղակալների մասին հրապարակված է միայն նրանց կենսագրականները, նրանց ծառայողական հեռախոսահամարները, իսկ էլեկտրոնային փոստի հասցեներ չկան:

Քաղավիացիայի վարչության կայքում միայն Գլխավոր Վարչության պետի կոնտակտային տվյալներ են, իսկ Կառուցվածք էջը միայն սխեմատիկ պատկեր[24] է տալիս Վարչության կառուցվածքի մասին: Սակայն ամբողջական կառուցվածքը համապատասխան կոնտակտային տվյալներով հրապարակված է Դիմեք մեզ բաժնի Կոնտակտներ էջում:

Պետեկամուտների կոմիտեի և **Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի** կայքերում բացակայում են էլ. փոստի հասցեները[25]:

Մարզպետարանների դեպքում պատկերը բավականին դրական է: Բոլոր մարզպետարանները կայքերի Կառուցվածք բաժիններում հրապարակել են ղեկավար մարմինների, Կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կանոնադրական գործառույթները և դրանց պետերի հեռախոսահամարները, էլ. փոստի հասցեները (օրինակ՝ Լոռու մարզպետարանի կայքը[26]):

Սակայն, շատ քիչ կայքերում է ապահովված ՏԱ օրենքով ամրագրված **Հաստիքացուցակների հրապարակման** պահանջը:

[23] http://www.mil.am/hy/pn/317/18/109
[24] http://www.aviation.am/images/avia/aviamap2.swf
[25] http://www.cadastre.am/page/committee_structure
[26] http://lori.mtad.am/structure/info/298/

Հաստիքացուցակների հրապարակում

Դիտարկված 37 մարմիններից 23-ը չեն ապահովել ՏԱ օրենքով սահմանված՝ մարմնի հաստիքացուցակների հրապարակումը:

Աղյուսակ 6. Հրապարակե՞լ են արդյոք հաստիքացուցակները



Պետք է նշել, որ հրապարակված ցուցակներն էլ շատ դեպքերում տեղադրված են pdf ֆորմատով, առանց պատճենահանման հնարավորության, օրինակ՝ Արարատի մարզպետարանի կայքում[27]: Ընդ որում հաստիքացուցակների մի մասը հենց Կառուցվածք բաժնում է տեղադրված, օրինակ՝ Գեղարքունիքի մարզպետարանի կայքում[28], իսկ որոշ կայքերում՝ առանձին Հաստիքացուցակներ էջում, օրինակ՝ **Արդարադատության նախարարության** կայքում[29]: Իսկ մի քանի մարզպետարաններ հաստիքացուցակները հրապարակել են Մեր մասին բաժնում[30]:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ՏԱ օրենսդրությամբ սահմանված պարտադիր հրապարակման ենթակա 13 խումբ տեղեկություններից առավել լիարժեք և ամբողջական հրապարակվում են տեղեկություն տնօրինողների կառուցվածքի, կոնտակտային տվյալների մասին տեղեկությունները: Այս առումով դիտարկված կայքերից գերակշիռ մասն ապահովում է կայքերի միջոցով մարմնի կառուցվածքի և պաշտոնյաների հետ հետադարձ կապի տվյալների տրամադրումը: Սակայն, ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված հաստիքացուցակների պարտադիր հրապարակումը դեռևս խիստ թերի է:

27 http://ararat.mtad.am/files/docs/18184.pdf?rand=39
28 http://gegharkunik.mtad.am/structure/
29 http://www.moj.am/page/588
30 http://syunik.mtad.am/about/

4. ՏԱ պատասխանատու անձի մասին տեղեկությունների հրապարակում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինող մարմինը պետք է նշանակի տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձ (հոդված 12, կետ 5-րդ): Հաջորդ՝ 13-րդ հոդածում ամրագրված է տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները՝

> «1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:
>
> 2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝
>
> 1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.
>
> 2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը.
>
> 3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները»:

2015թ.-ի հոկտեմբերի 15-ին, ՀՀ կառավարությունն ընդունեց **«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N-1204Ն որոշումը**, որով ևս հստակեցված են տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձի պարտականությունները և լիազորությունները: Տվյալ կարգի 5-րդ կետը սահմանում է՝

> «Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի հետ կապ հաստատելու տվյալները (էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը) տեղադրվում են տվյալ տեղեկատվությունը տնօրինողի պաշտոնական կայքում:» (*ընդգծումը մերն է*):

Այսպիսով, ՏԱ օրենսդրության պահանջից բխում է, որ տեղեկություն տնօրինողն իր պաշտոնական ինտերնետային կայքում լիարժեք և ամբողջական տեղեկություն պետք է հրապարակի ՏԱ պատասխանատուի մասին, ընդ որում այդ տեղեկությունը պետք է ամենաակնառու և հեշտ գտնվող հատվածում լինի: Սակայն մեր դիտարկումները ցույց տվեցին, որ ոչ բոլորն են այս պահանջը կատարում: Այսպես.

Ըստ արդյունքների՝ 37 մարմիններից 5-ի կայքում ընդհանրապես տեղեկություն չկա ՏԱ պատասխանատուների մասին:

Աղյուսակ 7. Հրապարակվա՞ծ է արդյոք ՏԱ պատասխանատուի մասին տեղեկություն



Թեև աղյուսակից երևում է, որ ՏԱ պատասխանատուի մասին տեղեկությունները հրապարակել է դիտարկված 37 մարմինների մեծ մասը՝ 32 մարմին, սակայն սա դեռևս դրական ցուցանիշ չէ, քանի որ այդ տեղեկությունը հրապարակած 32 մարմիններից միայն երկուսն է ՏԱ պատասխանատուի տվյալները հրապարակել կայքի Գլխավոր էջում՝ երևացող հատվածում: Գերակշիռ մասը ՏԱ մասին տվյալներ չի հրապարակել նույնիսկ մարմնի Կառուցվածք բաժնում, արդյունքում՝ կայքերը դիտարկելիս հաճախ միայն որոնման համակարգից օգտվելով հնարավոր եղավ գտնել այդ մարմնի ՏԱ պատասխանատուին:

Կարևոր է, որ այդ տեղեկությունը հրապարակվի Գլխավոր էջի երևացող հատվածում ինչպես օրինակ Թեժ գիծն է: Օրինակ Քաղաքաշինության պետական կոմիտեի կայքի գլխավոր էջի ձախ անկյունում օգտագործողը միանգամից կարող է գտնել ՏԱ պատասխանատուի կոնտակտները[31]:

Առողջապահության նախարարության օրինակը կարելի է լավագույնը համարել, քանի որ նախ կայքի գլխավոր էջի ներքևի մասում նախարարության կոնտակտային տվյալների հետ մեկտեղ նշված է նաև տեղեկատվության պատասխանատուի հետ կապ հաստատելու տվյալները, ինչպես նաև Կառուցվածք բաժնում են այս տեղեկությունները դրված, հրապարակված է նաև պատասխաատուին նշանակելու հրամանը, որով և հաստատվել են նրա գործառույթները:

[31] http://minurban.am/am/

Մեկ ընդհանուր թերություն, որ հատկանշական է մեծ մասին. **ՏԱ պատասխանատուի անձի մասին նշված չէ Կառուցվածք բաժնում:** Օրինակ եթե ՏԱ պատասխանատուի լիազորությունները դրված են Հասարակայնության հետ կապերի վարչության պետի վրա, Կառուցվածք բաժնում այս պաշտոնյայի տվյալների շարքում այդ մասին տեղեկություն չկա: Այնինչ, կարևոր է, որ այդ մասին այստեղ նշված լինի, ինչպես օրինակ՝ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների կայքում է[32]:

Անհասկանալի է, թե ինչու է ՏԱ պատասխանատուի մասին տեղեկությունը տեղադրված Մեր հասցեն ենթաէջում, ինչպես Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և շատ մարզպետարանների դեպքում է, օրինակ՝ Սյունիքի մարզպետարանի կայքը[33]:

Մարզպետարանների մի մասն էլ առանձնացրել է *Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու* ենթաբաժինը, որտեղ և հրապարակված է անհրաժեշտ տեղեկությունը: Ինչպես օրինակ Կոտայքի մարզպետարանի կայքի Կառուցվածք *բաժնի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին* էջում նշել է ՏԱ ապահովման պատասխանատուի մասին և նրա գործառույթները, ինչպես նաև Դիմեք մեզ բաժնի *Կայքի տեղեկատվությունները պարզաբանելու իրավասություն ունեցող և տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուի տվյալները* էջում:

Այսպիսով, ընդհանուր պատկերից երևում է, որ դիտարկվող 37 մարմինների կայքերի գերակշիռ մասը հստակ և ամբողջական տեղեկություն չեն տալիս այդ մարմնի ՏԱ ապահովման համար պատասխանատու անձի մասին: Ընդ որում շատ կարևոր է, որ այդ անձի ծառայողական կոնտակտային տվյալները, նրա գործառույթները առաջնահերթ հրապարակված լինեն գլխավոր էջում և Կառուցվածք բաժնում:

Մեկ ուշագրավ փաստ ևս. 2016 թվականի հոկտեմբերին ՀՀ նորանշանակ վարչապետը գործադիր մարմիններին հանձնարարեց առանձին ցուցակով հրապարակել **ըստ ոլորտների պատասխանատուների հետ Հետադարձ կապի ցանկերը:** Առաջինն էլ այդ ցանկը հրապարակվեց Կառավարության՝ www.gov.am կայքում, հատուկ երևացող առանձին բաժնով[34]: Ինչպես նշված է կայքում, ցանկի հրապարակումը հանրությանը և գործարար համայնքին հնարավորություն է տալիս կապ հաստատել, ներկայացնել վարչապետին ուղղված իրենց հարցերն ու առաջարկությունները:

[32] http://mtcit.am/main.php?lang=1&page_id=605

[33] http://syunik.mtad.am/address/

[34] http://gov.am/am/news/item/12664/



Սրան հաջորդեցին նաև նախարարությունների, Կառավարությանն առընթեր մարմինների և մարզպետարանների կայքերում հրապարակված «Հետադարձ կապ պատասխանատուների հետ» ցուցակները: Նշենք, սակայն որ հրապարակված ցանկերի ցուցակների մեծ մասում Տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձանց մասին տեղեկություններ չկան, օրինակ հենց Կառավարության աշխատակազմի հրապարակած ցուցակում կամ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, Գյուղատնտեսության նախարարությունների[35]: Բնապահպանության նախարարությունը Հետադարձ կապ պատասխանատուների հետ ցուցակը նույնությամբ կրկնել է կառուցվածք բաժնի տվյալները[36], առանց ցանկում նշելու պաշտոնատար անձանց պատասխանատու ոլորտները և լիազորությունները:

Աղյուսակ 8. Ոլորտային պատասխանատուների հետ հետադարձ կապի ցուցակների հրապարակումն ըստ մարմինների



Այսպիսով, ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, պատասխանատուների հետ հետադարձ կապի ցուցակների հրապարակման պատկերը հետևյալն է. ՀՀ կառավարության

35 http://www.minenergy.am/page/feedback
36 http://www.mnp.am/?p=148

աշխատակազմը հրապարակել է ցանկն առանց ՏԱ պատասխանատուի տվյալների, 18 նախարարություններից 5-ի պաշտոնական կայքերում հնարավոր չեղավ գտնել այդ ցանկը: Իսկ հրապարակած ցանկերից միայն 3 է այդ ցանկում նշել նաև ՏԱ պատասխանատուի հետ կոնտակտային տվյալները, դրանք են **Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների**[37]**, Սփյուռքի և Արտակարգ իրավիճակների նախարարությունները**:

Կառավարությանն առընթեր 8 մարմիններից 6-ի կայքերում հնարավոր չեղավ գտնել ոլորտային պատասխանատուների հետ հետադարձ կապի ցանկ, սակայն հարկ է նշել, որ **Ոստիկանության կայքն** ունի Օգնություն քաղաքացիներին բաժին[38], որի Ինչպես ստանալ տեղեկատվություն ոստիկանությունից ենթաբաժնում մանրմասն զետեղված են տարբեր հարցերով Ոստիկանություն դիմելու կարգը և պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները: **Անշարժ գույքի կադաստրի պետական** կոմիտեն հենց Հետադարձ կապ բաժնում տեղադրել է ցուցակը՝ այստեղ ներառելով նաև ՏԱ պատասխանատուի տվյալները[39]: Նույն կերպ Պետական գույքի կառավարման վարչության կայքում է[40]:

Ստացվում է, որ մարմիններն ավելի արագ և ամբողջական են կատարում վարչապետի հանձնարարականը, քան օրենսդրության պահանջը. Հետադարձ կապի ցուցակը Կառավարության կայքում հրապարակվել է հենց գլխավոր էջում, առանձնացված հատուկ բաժնով, ինչպես և շատ նախարարությունների և ԿԱ մարմինների դեպքում: Իսկ ՏԱ պատասխանատուների մասին տվյալները նույն այս կայքերի ետնաբաժիններում են կամ ընդհանրապես բացակայում են:

5. Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն

ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված պարտադիր հրապարակման տեղեկությունների ցանկում է ներառված նաև ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները:

ՏԱ հարցումների վիճակագրության հրապարակմանն անդրադառնում է նաև տեղեկություն տրամադրելու կարգի մասին Կառավարության որոշումը. Կարգը ապահովում է տեղեկատվության ազատության կիրառման պրակտիկայի ամբողջական պատկերի առկայությունը: Այստեղ ամրագրվում է, որ ՏԱ հարցումների վիճակագրությունը վարվելու է ըստ հարցումների բովանդակության: Համաձայն Որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետի՝

> «Վիճակագրությունն իրականացվում է ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների: Վիճակագրական տվյալները առնվազն

[37] http://mtcit.am/main.php?lang=1&page_id=644
[38] http://www.police.am/help/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81
[39] http://www.cadastre.am/page/426
[40] http://spm.am/am/contacts/

պարունակում են ստացված հարցումների ընդհանուր թիվը և տեսակը: Ամենամյա վիճակագրական տվյալները հրապարակվում են տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում»:

Այնուհանդերձ, չնայած օրենսդրական հստակ պահանջի, մինչ օրս պետական մարմինների գերակշիռ մասը վիճակագրությունը ներկայացնում է մարմնին հասցեագրված ընդհանուր դիմումների տեսքով՝ չտարանջատելով տեղեկություն ստանալու հարցումները դիմումներից, բողոքներից կամ այլ գրություններից:

Առանձնացված վիճակագրությունը վարելու և հրապարակելու նախադրյալներից է նաև ստացված հարցումները մարմնի ներքին փաստաթղթաշրջանառության համակարգում առանձին դասակարգելը, ինչը, ոչ բոլոր մարմիններում է արվում: Շատ դեպքերում ստացված դիմումները և բողոքները տեղեկություն ստանալու հարցումների հետ միասին Մալբերի փաստաթղթաշրջանառության ներքին համակարգում դասվում են նույն կատեգորիայում, ինչն էլ հետագայում թույլ չի տալիս առանձին ստանալ Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրական պատկերը: Կայքերում հրապարակված Վիճակագրական տվյալներն էլ այդ են վկայում. հիմնականում ներկայացված են ընդհանուր թվեր՝ տեղեկություն ստանալու հարցումները առանձնացված չեն:

Այսպես. **դիտարկված 37 մարմինների կայքերից 19-ը ընդհանրապես չի հրապարակել տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ**, սրանց կարելի հավելել նաև այն 6 մարզպետարաններին, որոնք հրապարակում են ստացված բոլոր հարցումներ ու պատասխանները, սակայն դրանց վերաբերյալ ամփոփ տվյալներ չկան, ինչպես պահանջում է ՏԱ օրենսդրությունը: 5 մարմնի կայքում թեև կային հարցումների վերաբերյալ ամփոփ տվյալներ, սակայն դրանք միայն 2015 թվականի տվյալներ էին: Եվ միայն 7 մարմնի կայքում է հրապարակված ստացված հարցումների վերաբերյալ ամփոփ տվյալներ՝ քանի հարցում է ստացել մարմինը, քանիսին է պատասխանվել, մերժվել, վերահասցեագրվել և այլն:

Աղյուսակ 9. Հրապարակվա՞ծ է արդյոք տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը



Այսպես, **37 մարմիններից 25-ը չեն հրապարակել տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրական տվյալները:** ՀՀ կառավարության և 9 նախարարության, Կառավարությանն առընթեր 8 մարմիններից և ոչ մեկի, ինչպես նաև Շիրակի մարզպետարանի կայքերում չգտնվեցին տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ վիճակագրություն: Իսկ մարզպետարաններից 6-ը պարզապես հրապարակում են ստացված հարցումները և դրանց պատասխանները, առաց ամփոփելու դրանց տվյալները: Այնինչ, առնվազն տարեկան կտրվածքով անհրաժեշտ է ներկայացնել, թե քանի տեղեկություն ստանալու հարցում է մուտք եղել, դրանցից քանիսին է պատասխան տրվել, քանիսը՝ մերժվել, ինչ հիմքով:

Լավագույնը կարելի է համարել Մշակույթի նախարարության օրինակը. կայքի Տեղեկատու բաժնի Վիճակագրություն ենթաբաժնում առանձին ներկայացված են և Թեժ գծով ստացված զանգերի շաբաթական ամփոփումները, և առանձին տրված է թե նախարարությունը քանի գրավոր և բանավոր հարցում է ստացել[41]: Վիճակագրական ամբողջական պատկերն ունենալու համար, կառաջարկեինք գրավոր հարցումներից առանձնացնել էլեկտրոնային հարցումները:

Մարզպետարանների համար օրինակելի կարելի է համարել Տավուշի մարզպետարանի հրապարակման ձևը, երբ նախ ներկայացված է հարցումների ընդհանուր վիճակագրությունը, այնուհետև՝ ստացված բոլոր հարցումները և դրանց պատասխանները: Սակայն, ցավոք, այստեղ էլ տվյալները թարմացված չեն՝ 2016 թվականի վիճակագրությունը չկա[42]:

Չնայած Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքի *Նախարարություն* բաժնի *Վիճակագրություն* ենթաբաժնում կարելի է գտնել 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների Փաստաթղթաշրջանառության վիճակագրությունն ըստ ամիսների, սակայն այստեղ առանձնացված են միայն քաղաքացիներից ստացված

[41] http://mincult.am/question_statistic.html
[42] http://tavush.mtad.am/harc/

հարցումները[43], իրավաբանական անձանցից, այդ թվում և ՀԿ-ից ստացված հարցումները ներառված չեն. օրինակ ԻԱԿ-ը հոկտեմբերին և նոյեմբերին մեկական էլեկտրոնային հարցում է հղել նախարարությանը և պատասխան ստացել (դրանց կարող եք ծանոթանալ http://www.givemeinfo.am կայքում), սակայն փաստաթղթում նշված է, որ այս ամիսներին նախարարությունը էլեկտրոնային հարցում չի ստացել: Այսինքն տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության ընդհանուր պատկերը չկա:

Իսկ Առողջապահության նախարարության կայքում էլ վիճակագրական տվյալների ամփոփումը հրապարակված է ոչ թե *Վիճակագրություն* ենթաբաժնում այլ *Տեղեկատվական հարթակ* բաժնի *Հաշվետվություններ* ենթաբաժնում մի շարք այլ փաստաթղթերի շարքում:

Մի քանի կայքերում էլ տվյալները թարմացված չեն, ինչպես օրինակ Սփյուռքի, Գյուղատնտեսության նախարարությունների կայքերում են: Այստեղ միայն 2015 թվականի վիճակագրությունն է:

Արտակարգ իրավիճակների նախարարության կայքի *Տեղեկատվական կենտրոն* բաժնի *Վիճակագրություն* ենթաբաժնում հրապարակված են միայն հրդեհների, արտակարգ դեպքերի և այլնի վերաբերյալ տվյալներ[44]: Կրթության և գիտության նախարարության կայքի *Նախարարություն* բաժնի *Վիճակագրություն* ենթաբաժնում էլ՝ միայն կրթության հիմնական ցուցանիշների վիճակագրական ամփոփումներն են[45]: Իսկ Արդարադատության նախարարության հրապարակած վիճակագրական տվյալները վերաբերում են ոչ թե հարցումներին, այլ՝ դիմում, բողոք, առաջարկություններին: Ընդ որում վերջին թարմացված փաստաթուղթը 2015 թվականի առաջին եռամսյակի տվյալներն են[46]: Չնայած մեկ այլ՝ *ՏԱ օրենքը և տեղեկատվություն տրամադրելու կարգը* ենթաբաժնում նշվում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի (ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.) պահանջի վերաբերյալ տվյալները հղումով կարելի է գտնել վերընշված բաժնում, սակայն ինչպես նշեցինք, փաստաթուղթը չի պարունակում հարցումների մասին տվյալներ[47]:

[43] http://www.minenergy.am/page/395
[44] http://www.mes.am/hy/vichakagrutyun/
[45] http://edu.am/index.php/am/about/view/80
[46] http://www.moj.am/page/564
[47] http://www.moj.am/storage/files/pages/pg_2892520159621_Vichakagrutyun.pdf

6. Տեղեկատվության ազատության վերաբերյալ առանձին բաժին

Մշտադիտարկման առանցքային դիտարկումներից է նաև տեղեկատվության ազատության իրավունքի մասին տեղեկատվության տրամադրման պրոակտիվ հրապարակումը: Կարևոր է, որ պետական մարմինները հանրությանը տեղեկացնեն տեղեկություն ստանալու և տրամադրելու օրենսդրական բոլոր հիմքերը, տան պարզաբանումներ և վիճակագրական տվյալներ այս ոլորտի մասին:

Այսպես, դիտարկված 37 մարմիններից միայն 5-ն ունեն Տեղեկատվության ազատության անվամբ գլխավոր բաժին՝ Բնապահպանության[48] և Սփյուռքի[49] նախարարությունները, իսկ մարզպետարաններից 3-ի դեպքում այդ բաժինը կոչվում է «Դիմեք մեզ, Տեղեկատվության ազատության» բաժին, որտեղ և հրապարակված են ՏԱ վերաբերյալ նյութերը:

Մյուս մարմինները ՏԱ իրավունքին վերաբերող նյութերը հրապարակել են տարբեր բաժինների ենթաբաժիններում, ընդ որում հաճախ այնքան հեռու ենթաբաժիններում, որ միայն որոնման համակարգի օգնությամբ է հնարավոր լինում գտնել անհրաժեշտ նյութերը: Նախարարությունների մեծ մասը ՏԱ մասին նյութերը հրապարակել են կայքերի *Տեղեկատվական կենտրոն, Տեղեկատու* բաժինների ենթաբաժիններում, օրինակ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը[50]:

Անհասկանալի է, թե ինչու է *ՏԱ օրենքն ու տեղեկություն տրամադրելու կարգը ենթաբաժինը*[51] տեղ գտել Արդարադատության նախարարության կայքի *Ընդունելություն բաժնում*: Սակայն դրականն այն է, որ այստեղ հրապարակված նյութերը բավականին մատչելի ձևաչափով են. Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա 13 խումբ տեղեկությունները մեջբերելով՝ հղում է տրված կայքի այն բաժիններին, որտեղ դրանք հրապարակված են:

Նույն կերպ է վարվել նաև Գեղարքունիքի մարզպետարանը. կայքում բաժինը կոչվում է «*Տեղեկատվության ազատություն, Դիմեք մեզ*»: Տեղեկատվության ազատություն բառն առաջնայինն է բաժնի վերնագրում: Այստեղ բավականին շատ նյութեր են հրապարակված, այդ թվում և Կառավարության որոշումը, Գաղտնազերծված փաստաթղթերի մասին տեղեկություն, ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի պահանջից բխող պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը և դրանց հրապարակման հղումները կայքում[52]:

Թեև Ֆինանսների նախարարության կայքը ՏԱ վերաբերյալ նյութեր չի հրապարակել, սակայն *Մամուլի կենտրոն բաժնում* տեղադրված է հարցման օրինակելի ձևը, Հարցումն առցանց

[48] http://www.mnp.am/?p=146
[49] http://www.mindiaspora.am/am/texekatvutyun
[50] http://www.minenergy.am/page/430
[51] http://www.moj.am/page/information_request
[52] http://gegharkunik.mtad.am/hraparak/

լրացնելով օգտվողը հնարավորություն է ստանում հենց այդ էջից ուղարկել տեղեկություն ստանալու էլեկտրոնայի հարցում[53]:

Իսկ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կայքի գլխավոր էջի ձախ անկյունում[54] նշված է Տեղեկատվություն ստանալու հարցում բաժինը միայն, դա էլ հողումով Կառավարության էջի համապատասխան Հարցման էջին է տանում:

Լիարժեքության, հավաստիության և թարմացման տեսանկյունից կարելի է արձանագրել, որ բոլոր կայքերում էլ ՏԱ իրավունքին վերաբերող նյութերը բավարար չեն: Տեղեկատվության ազատության իրավունքի պարզաբանման մեջ և Հարցման օրինակելի ձևում փոփոխված չէ սահմանադրական նորմը՝ 27-րդ հոդվածի մեջբերումը, օրինակը՝ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=77&child_id=782&code_id=785:

Միայն Քաղաքաշինության պետական կոմիտեի կայքում է, որ հարցման օրինակելի ձևի մեջ նշված սահամանդրական նորմերը համապատասխանում են ՀՀ նոր սահմանադրության կետերին՝ 42-րդ և 51-րդ հոդվածներ[55]:

Կառավարությանն առընթեր 8 մարմիններից 5-ում ընդհանրապես չգտնվեցին ՏԱ վերաբերյալ նյութեր. Ոստիկանության կայքում, ինչպես վերևում նշել էինք, ՏԱ պատասխանատուների մասին տվյալները, Տեղեկատվության ազատության մասին պարզաբանումները տեղադրված են կայքի *Օգնություն քաղաքացիներին բաժնի* ինչպես ստանալ տեղեկություն Ոստիկանությունից ենթաբաժնում[56]: Իսկ Քաղավիացիայի վարչության կայքի գլխավոր էջի աջ կողմի ներքևի անկյունում կա Հարցման օրինակելի ձև բաժինը, սակայն այն չի գործում:

Մարզպետարանների կայքերում, ի տարբերություն նախարարությունների, և առավել ևս ԿԱ մարմինների, պատկերն առավել դրական է: Կայքերի մեծ մասը Դիմեք մեզ բաժինը անվանել է *Դիմեք մեզ և Տեղակատվության ազատություն*, որտեղ տեղադրված են ՏԱ օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ, ՏԱ վերաբերող նյութեր:

Դիտարկված 37 կայքերից **ամենալավ պատկերը** Վայոց Ձորի մարզպետարանի կայքում է. Ընդ որում հենց այս պատճառով 2016 թվականի սեպտեմբերի 28-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից կազմակերպվող Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք ամենամյա մրցանակաբաշխությանը կայքն արժանացավ Լավագույն պաշտոնական ինտերնետային կայք մրցանակին: Կայքի *Դիմեք մեզ, Տեղեկատվության ազատության* բաժնում[57] հրապարակված են մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվական համակարգերի և դրանց օգտագործման կարգի նկարագրություն, հարցումների և դիմումների վիճակագրությունը

[53] http://www.minfin.am/minfin.am/index.php?cat=93&lang=1
[54] http://www.mieir.am/?lang=arm
[55] http://minurban.am/am/info/orinakeli_dzev
[56] http://www.police.am/help/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81
[57] http://vdzor.mtad.am/dimumi1/

եռամսյակային, կիսամյակային կտրվածքով, ստացված հարցումները և դրանց պատասխանները և այլն:

Այսպիսով, ներկայացված արդյունքներից պարզ է դառնում, որ

- ***ՏԱ վերաբերող հրապարակված նյութերը համակարգված չեն*** - Դիտարակված կայքերում Տեղեկատվության ազատությանը վերաբերող շատ փաստաթղթեր, տվյալներ, պարզաբանումներ մինչ օրս ամբողջական չեն հրապարակվում կամ դրանք տեղադրվում են կայքերի տարբեր բաժիններում, ինչը օգտագործողի համար գործնականում հասանելի չի լինում: Կայքերում այս տեղեկատվության հրապարակման լավագույն միջոցը կարող է լինել առանձնացված Տեղեկատվության ազատություն բաժինը, որտեղ կարելի է համակարգված տեղադրել և ՏԱ օրենսդրությամբ պահանջվող բոլոր նյութերը, Տեղեկություն ստանալու դիմումի օրինակելի ձևը և ոլորտին առընչվող հավելյալ պարզաբանումները:
- ***Նյութերն ամբողջական չեն*** - Շատ կայքերում Տեղեկատվության ազատությանը վերաբերող ենթաբաժիններում հրապարակված է 1-2 նյութ: Այնինչ այստեղ պետք է առնվազն հրապարակվեն տնօրինվող տեղեկությունների ցանկը, դրանց տնօրինման կարգը, տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը և այլն: Շատերը չեն հրապարակել իրենց գերատեսչությունում առկա տեղեկատվության տրամադրման կարգը, որը կարելի էր ապահովել Կառավարության որոշման տեղադրմամբ:
- ***Հրապարակված նյութերը չեն թարմացվում*** - ՏԱ օրենսդրության և ՏԱ իրավունքի պարզաբանումներ, ինչպես նաև հարցման օրինակելի ձևի մեջ, կապված օրենսդրական փոփոխությունների հետ, անհրաժեշտ է պարբերաբար լրացումներ և ուղղումներ անել, ինչը չեն արել մարմինների գերակշիռ մասը: Այսպես, օրինակ՝ Ինֆորմացիայի ազատության Կենտրոնի մշակած Հարցման օրինակելի ձևում մեջբերվում է ՏԱ իրավունքին վերաբերող սահմանադրական նորմերը, որոնք նախկինում 27 և 27.1 հոդվածներն էին, իսկ սահմանադրական փոփոխությունների արդյունքում դրանք դարձել են 42 և 51-րդ հոդվածները: Միայն Գյուղատնտեսության նախարարությունը և Քաղաքաշինության կոմիտեն են սեփական նախաձեռնությամբ ուղղել սա: Կամ, Տեղեկատվության տրամադրման կարգի մասին Կառավարության որոշմամբ հստակեցվեցին տեղեկություն տրամադրելու դիմաց վճարների չափերը, կագավորվեցին էլեկտրոնային հարցումների միջոցով տեղեկություն ստանալու և դրանց պատասխանելու գործընթացը, սակայն Տեղեկություն ստանալու իրավունքի պարզաբանումների մեջ ոչ մի մարմին չի լրացրել այս հատվածները:

7. Հաճախակի տրվող հարցեր բաժին

Համաձայն Տեղեկություն տրամադրելու կարգի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 14-րդ կետի՝ Պետական մարմնի պաշտոնական կայքը պետք է ունենա «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ հրապարակվում են պարբերաբար (հինգ և ավելի անգամ) տրված միևնույն հարցերը և դրանց պատասխանները:

Այս կետի ամրագրմամբ Կարգը խրախուսում է պրոակտիվ տեղեկատվության ազատությունը՝ լրացնելով և հարստացնելով ՏԱ օրենքով սահմանվող կարգավորումները: Կարգը նախատեսում է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը որևէ հարցի վերաբերյալ հաճախ է ստանում հարցումներ, ապա պետք է դրանք ամփոփի ու տեղադրի իր պաշտոնական կայքում:

Չնայած դիտարկված 37 մարմինների կայքերի մեծ մասն ունի Հաճախ տրվող հարցեր բաժին, սակայն դրանք չթարմացվող բաժիններ են: Կայքի գործարկման հենց սկզբից այստեղ տեղադրվում են մարմնի գործունեությանը կամ ոլորտին վերաբերող մի քանի հարց ու պատասխան և այլևս այս բաժինները չեն թարմացվում: Այնինչ տեղեկությունների տրամադրման կարգի մասին Կառավարության որոշմամբ նախատեսվում է, որ այս բաժնում պետք է հրապարակվեն 5 և ավելի միևնույն բովանդակության հարցումները և դրանց պատասխանները: Օրինակ, եթե Կրթության և գիտության նախարարությունը 5 անգամ ստանում է հարցում, թե ինչ անհրաժեշտ փաստաթղթեր են պետք ներկայացնել առաջին դասարանցուն դպրոց ընդունելու համար, ապա պատասխանը նախարարությունը պետք է հրապարակի այս բաժում, այնուհետև նաև կարող է նման հարցում ստանալիս՝ հղում անել հենց կայքի այդ հրապարակմանը:

8. Տեղեկություն տնօրինողին ուղղակիորեն առցանց հարցում ներկայացնելու հնարավորություն

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 15 հոկտեմբերի 2015 թվականի N 1204-Ն որոշման[58] մեջ անմիջականորեն նշվում է, որ

> «3. Տեղեկատվություն տնօրինողներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել իրենց պաշտոնական կայքերում (առկայության դեպքում) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը»:

Սրանով Գործադիրը պահանջ է դնում ապահովել պաշտոնական կայքերի միջոցով հարցում ուղարկելու հնարավորությունը, ընդ որում, այդ բաժինները պետք է նաև ապահովեն հարցման տեքստը կցելու հնարավորություն:

Որոշման 1-ին Հավելվածի 6-րդ կետը սահմանում է՝

> «6. **Տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում պետք է առկա լինի «Ուղարկել հարցում/դիմում»** կամ այլ համապատասխան բաժին, որտեղ, ելնելով գործունեության

[58] http://www.arlis.am/documentview.aspx?docID=101115

առանձնահատկություններից, պետք է տեղադրվեն տեղեկատվություն տնօրինողին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկություն ստանալու մասին հարցումների օրինակելի ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ ցուցումները: Հարցման օրինակելի ձևը ներառում է՝

1) դիմողի անունը և ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը) (պարտադիր).

2) բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (հասցեն)՝ (պարտադիր).

3) քաղաքացիությունը.

4) հեռախոսահամարը.

5) էլեկտրոնային փոստի հասցեն.

6) հարցման բուն էությունը.

7) ծանուցում ստանալու եղանակի մասին նշում»:

Իսկ 7-րդ կետը հավելում է, որ

«....պաշտոնական կայքի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելուց հետո՝ ստորագրությամբ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով տվյալ մարմին ուղարկված հարցումները, ստացման օրը, տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին համապատասխան, մուտքագրվում են տվյալ տեղեկատվությունը տնօրինողի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և շրջանառվում այդ կարգի համաձայն: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բացակայության դեպքում հարցումները շրջանառվում են տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին համապատասխան: Դիմողն առցանց եղանակով կարող է հետևել իր հարցման ընթացքին… »:

Այսպիսով, Կարգը որպես հարցում ուղարկելու եղանակ է դիտում նաև էլեկտրոնային փոստը կամ **պաշտոնական կայքերի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից հարցման ուղարկումը:** Սա դրական մեծ առաջընթաց կարձանագրի տեղեկատվության ազատության ոլորտում՝ խնայելով ինչպես պետության, այնպես էլ քաղաքացիների ժամանակն ու միջոցները, տեղեկություն տնօրինող պետական մարմինների հետ փոխհարաբերությունները կդարձնի առավել արդյունավետ և պարզ:

Այս բաժինները ուսումնասիրելիս դիտարկվել են, թե արդյոք

- կայքն ունի՞ առցանց հարցում ուղարկելու բաժին,
- ի՞նչ պարտադիր դաշտեր պետք է լրացնի օգտագործողը,
- բաժինը հնարավորություն տալի՞ս է Հարցման ստորագրված և սքանավորված ֆայլը կցել:

Այսպես. Ստորև բերված աղյուսակի արդյունքները ցույց են տալիս, որ **դիտարկված 37 մարմիններից 36-ը չի կատարել Կառավարության որոշման պահանջը**՝ Տեղեկատվություն տնօրինողներին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել իրենց պաշտոնական կայքերում (առկայության դեպքում) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը, և չի ապահովել ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը:

Միայն Ֆինանսների նախարարության կայքն է ապահովել հարցումը կցելու հնարավորությունը, սակայն այս բաժնում էլ մյուս կողմից խախտված է օրենսդրական պահանջը, և նշված է, որ այդ կերպ ուղարկված հարցումները պաշտոնական ընթացակարգով չեն դիտարկվում:

Աղյուսակ 10. Ունե՞ն արդյոք կայքերը ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը:



37 մարմիններից 8-ը, չնայած տալիս են կայքերի միջոցով առցանց հարցում ուղարկելու հնարավորություն, սակայն այդ բաժնում նշում են, որ «ուղարկված էլեկտրոնային նամակները չեն կարող համարվել պաշտոնական: Դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության»: Նշենք, որ սա անմիջականորեն հակասում է Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 1204-Ն Որոշմանը, համաձայն որի սահմանվում է կայքերի միջոցով առցանց հարցումներ ուղարկելու և դրանց պատասխանելու գործընթացը:

Դրանք են.

- **ՀՀ կառավարության gov.am կայքում առցանց դիմելու հնարավորություն չկա, փոխարենը e-gov.am կայքում** առանձին գործում է *Գրեք նամակ Կառավորությանը բաժինը*[59]: Սակայն մեկ կարևոր բացասական երևույթ, որը նկատելի է նաև շատ նախարարությունների կայքերում: Այս բաժնի հենց առաջին իսկ նախադասությամբ նշված է, որ

«Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այս կայքի միջոցով առանց էլեկտրոնային ստորագրության ուղարկված էլեկտրոնային նամակները չեն կարող համարվել պաշտոնական, դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության»:

Հավելյալ նաև նշված է, որ եթե հարցումը կամ դիմումը ուղարկվի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա՝ *«էլեկտրոնային թվային ստորագրության առկայության դեպքում Ձեր դիմումը/հարցումը պարտադիր կարգով քննության կառնվի»:*

Այնինչ, կառավարության կողմից իսկ ընդունված N 1204-Ն Որոշումն արդեն իսկ իրավական հիմք է ստեղծել առցանց հարցումները պաշտոնական ընթացակարգով դիտարկելու և դրանց պատասխանելու համար, ընդ որում դրանք վավեր են «*ստորագրությամբ*, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով»: Ստորագրվածի նշումը հուշում է, որ դիմումի ստորագրած սքանավորված տարբերակի կցումով հարցումները կարող են վավեր համարվել և այս բաժիններում, համաձայն Կառավարության որոշման 3-րդ կետի, պետք է այդ հնարավորությունը տրվի:

Կառավարության կայքը չի տալիս հարցումը կցելու հնարավորություն: Ստացվում է հենց առաջինը կառավարությունը չի կատարել իր իսկ կողմից ընդունված որոշման պահանջը:

- **Ֆինանսների նախարարության** կայքի Դիմեք մեզ բաժնում ևս նշված է, որ՝

  «Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, Այս կայքի միջոցով ուղարկված էլեկտրոնային նամակները չեն կարող համարվել պաշտոնական: Դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության»:

Դիտարկված 37 կայքերի մեջ, սա միակ կայքն է որ տալիս է փաստաթուղթը կցելու հնարավորություն, սակայն մյուս կողմից, հնարավորություն չկա էլեկտրոնային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի տվյալներով հարցումն ուղարկել:

[59] https://www.e-gov.am/your-question/

Արմավիրի, Գեղաքունիքի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի կայքերում ևս ի գիտությամբ նշված է, որ Դիմեք մեզ բաժնով ուղարկած հարցումները չեն կարող համարվել պաշտոնական. դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության:

Իսկ **Պետական եկամուտների կոմիտե** հարցումն ուղարկելուց հետո կոմիտեի աշխատակիցը զանգահարեց ԻԱԿ՝ հայտնելու, որ նման հարցումը չի կարող համարվել պաշտոնական, և նրանք չեն պատասխանի հարցմանը, եթե գրությունը չուղարկենք իրենց էլ. հասցեին, որը պարտադիր պետք է լինի ստորագրությամբ:

37 մարմիններից 8-ի կայքերը կամ ընդհանրապես չունեն առցանց հարցում ուղարկելու հնարավորություն կամ դրանք տեխնիկապես անհասանելի են. այսպես՝

Կրթության և գիտության նախարարության կայքում առկա է *Ուղարկել նամակ նախարարություն* բաժինը, սակայն բաժնում գրված է միայն էլ. փոստի միջոցով նախարարությանը հարցում/դիմում գրելու կարգը: Առցանց դիմելու հնարավորություն կայքը չի տալիս:

Պաշտպանության և Արտաքին գործերի նախարարությունների ու Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի պաշտոնական կայքերում բացակայում է *ԴԻՄԵՔ ՄԵԶ* կամ նմանօրինակ բաժինը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքի վերևի հատվածում տեղադրված Ծրարի նշանն ակտիվ չէ, Իսկ Դիմեք մեզ բաժինը դատարկ է:

Արտակարգ իրավիճակների նախարարության և Ոստիկանության պաշտոնական կայքերում ԴԻՄԵՔ ՄԵԶ բաժինը չի աշխատում: Ոստիկանությանը առցանց հարցում ուղարկելուց հետո այդ նույն պատուհանում գրվում է Could not open socket. Այնինչ կայքում գործում է Առցանց հարցման բաժինը[60], որտեղ միայն ճանապարհային երթևեկության խախտումների մասին հարցումներ է հնարավոր ուղարկել և ստանալ:

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կայքում ԴԻՄԵՔ ՄԵԶ բաժնի *դիմել առցանց* ենթաբաժին մուտք գործելուց հետո բացվում է մի պատուհան, որտեղ գրված է Ошибка 404. Файл не найден.

Արտակարգ իրավիճակների նախարարության կայքում համապատասխան բաժինները լրացնելուց հետո հարցումը չի ուղարկվում՝ թողնելով նույն վիճակում: Հեռախոսազանգի միջոցով ԻԱԿ-ը փորձեց պարզել խնդիրը, նախարարության պատասխանը զարմանալի էր. այնտեղ ոչ ոք տեղյակ չէր, թե այդ բաժնի խնդիրները ով է լուծում:

[60] https://request.roadpolice.am/

Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կայքը չունի համապատասխան բաժին, միայն կայքի վերևի հատվածում ծրարի նշան է դրված, որը սեղմելիս բացվում է Microsoft Outlook ծրագիրը: Սա ընդունելի տարբերակ չէ:

Մի քանի կայքերում բաժինները հստակ անվանված չեն և դժվար գտնվող են.

Առողջապահության նախարարության կայքի գլխավոր էջի վերևի հատվածում Ծրարի նշան է առանց վերնագրի, որը բացելիս[61] տալիս է հնարավորություն ուղարկել հաղորդագրություն անուն, էլ. փոստ, թեմա և հաղորդագրություն դաշտերը լրացնելով: Հարցման օրինակը կցելու հնարավորություն չկա, նաև էլեկտրոնային ստորագրություն կամ նույնականացման քարտի տվյալները ներմուծելու հնարավորություն չկա:

Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Դիմեք մեզ բաժնում տեղադրված են հիմնականում ՏԱ վերաբերյալ նյութերը, առցանց գրելու հնարավորություն տրված է կայքի Կապ բաժնից:

Մարմիններ, որոնք ունեն համապատասխան բաժիններ, սակայն ՏԱ օրենսդրությունից չբխող պահանջներ են ներկայացնում.

Գյուղատնտեսության նախարարության կայքում պարտադիր դաշտերից է նաև լրացնել նույնականացման քարտի կամ անձնագրի սերիա:

Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կայքում բացի վերոնշյալից, պետք է կցել նաև անձնագրի պատճենը:

Մշակույթի, սփյուռքի, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների և **Ազգային անվտանգության ծառայության** կայքերի *ԴԻՄԵՔ ՄԵԶ* բաժնից օգտվելու համար հարկավոր է գրանցվել նախարարության կայքում, ընդ որում ԱԱԾ-ի կայքի համապատասխան բաժնում նշված է, որ «Հարցումները պետք է ունենան «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված էլեկտրոնային թվային ստորագրություն»[62]:

Ի տարբերություն սրա, ողջունելի է, որ Կադաստրի կոմիտեի կայքի այս բաժնում նշվում է, որ՝ «*Այսուհետ կարող եք Ձեր հարցերն ուղղել նաև info@cadastre.am էլեկտրոնային փոստի հասցեով: Հավաստիացնում ենք Ձեզ, որ յուրաքանչյուր դիմում-բողոք կամ առաջարկություն կստանա իր արձագանքը՝ բարձրացվող հարցը մանրակրկիտ կուսումնասիրվի և դրան կտրվի սպառիչ պատասխան*»[63]:

[61] http://www.moh.am/?section=static_pages/pages&id=6
[62] http://www.sns.am/index.php/am/contacts
[63] http://www.cadastre.am/feedback

Արդարադատության նախարարության կայքում առցանց դիմելու երկու հնարավորություն կա. Նամակ նախարարին բաժնով դիմելու համար նախ պետք է գրանցվել կայքում: Սակայն Հետադարձ կապ բաժնում առանց գրանցվելու կարելի է նամակ ուղարկել:

Բնապահպանության, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների և **10 մարզպետարանների** պաշտոնական կայքերի ԴԻՄԵՔ ՄԵԶ բաժնի *Ուղարկել հարցում/դիմում* ենթաբաժնով հարցում ուղարկելու համար քաղաքացին ուղղակի պետք է գրի իր անունը, ազգանունը, բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն և ուղարկելուց հետո համակարգը ուղարկում է հսկիչ համար առցանց նամակին հետևելու համար:

Պետական գույքի կառավարման վարչության և **անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի** կայքերից *Առցանց նամակ* ուղարկելու համար պետք է լրացնել 3 պարտադիր դաշտ. դրանք են քաղաքացու անունը, էլ.փոստը և հաղորդագրությունը:

Սպորտի և երիտասարդության հարցերի և Առողջապահության նախարարությունների կայքերում վերոնշյալ դաշտերին ավելանում է ԹԵՄԱ դաշտը:

Այսպիսով, դիտարկված 37 կայքերից և ոչ մեկը առցանց դիմում/հարցում ուղարկելու լիարժեք հնարավորությունները չի ապահովել, որոնցից.

- 8 մարմին ընդհանրապես նման հնարավորություն չի տալիս,
- փաստաթուղթ կցելու հնարավորություն չկա բոլորում, բացի Ֆինանսների նախարարության կայքից, սակայն այստեղ էլ նշված է, որ այդ հարցումները պաշտոնապես չեն դիտարկվում:
- 8 մարմինների, այդ թվում և ՀՀ կառավարության e-gov.am կայքի այս բաժիններում, ի հակասություն Կառավարության որոշման, նշում են, որ այս բաժիններից ուղարկված հարցումներին պաշտոնական ընթացք չեն տալիս:
- Որոշ կայքեր հավելյալ պահանջ են ներկայացնում, օրինակ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կայքի պահանջներից է անձնագրի պատճենի կցումը: Նման պահանջները հակասում են ՏԱ օրենսդրությանը:

ԲԱԺԻՆ Գ. Եզրահանգում և առաջարկություններ

Եզրահանգում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը արդեն ավելի քան 13 տարի է, ինչ գործում է: Սակայն տեղեկատվության ազատության կիրառման պրակտիկան դեռևս բավարար մակարդակի վրա չէ: Այս մոնիտորինգը հնարավորություն տվեց հավաստելու, որ ոլորտում առկա հիմնախնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Մասնավորապես, պաշտոնական ինտերնետային կայքերում պրոակտիվ հրապարակման ապահովման հիմնախնդիրներն են.

1. ՏԱ օրենսդրության պահանջների լիարժեք և ամբողջական չկատարումը:
2. Համապատասխան պատասխանատու անձանց գիտելիքների պակասը, անփույթ և անվերահսկելի աշխատառճը, ինչի արդյունքում հրապարակված տեղեկությունները ամբողջական, լիարժեք, մատչելի և թարմացված չեն:
3. ՏԱ ոլորտի օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Մոնիտորինգի արդյունքում կարելի է արձանագրել, որ դիտարված 37 պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերում հրապարակված տեղեկությունները

- **ամբողջական և լիարժեք չեն**,
- **թարմացումներն ապահովված չեն,**
- **մատչելի չեն:**

Մշտադիտարկման ընդհանուր պատկերից երևում է, որ գնահատված պետական կառավարման 37 մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերից և ոչ մեկը լիարժեքորեն չի իրականացնում ՏԱ օրենսդրության պահանջները և ամբողջությամբ չի ապահովում պրոակտիվ հրապարակման սկզբունքները կայքերի միջոցով:

ՏԱ վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը բավարար հիմքեր տալիս է ապահովելու պրոակտիվ հրապարակման սկզբունքները, տեղեկությունների բավականին լայն խմբեր են առանձնացվում, որոնց ամբողջական հրապարակման դեպքում բավարար չափով կարելի էր ապահովել պրոակտիվ հրապարակումը և բաց ու թափանցիկ աշխատառճը:

Նախ Տեղեկատվության ազատության մասին օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է 13 խումբ տեղեկություններ, որոնք պետք է հրապարակվեն սեփական նախաձեռնությամբ՝ նաև կայքերում: Օրենքը նաև ապահովում է տեղեկությունների թարմացումների սկզբունքը՝ ամրագրելով, որ հրապարակված նյութերի մեջ տեղի ունեցած փոփոխությունները առավելագույնը տասնօրյա ժամանակահատվածում պետք է հրապարակվեն: Այնինչ մշտադիտարկման ենթարկված կայքերից շատերում 1-2 տարի վաղեմության փաստաթղթեր

են տեղադրված, օրինակ բյուջեի կատարողականի մասին հաշվետվությունները կամ վիճակագրական տվյալները:

Համաձայն Տեղեկություն տրամադրելու կարգի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 14-րդ կետի՝ Պետական մարմնի պաշտոնական կայքը պետք է ունենա «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ հրապարակվում են պարբերաբար (հինգ և ավելի անգամ) տրված միևնույն հարցերը և դրանց պատասխանները: Այս կետի ամրագրմամբ Կարգը խրախուսում է պրոակտիվ տեղեկատվության ազատությունը՝ լրացնելով և հարստացնելով ՏԱ օրենքով սահմանվող կարգավորումները: Կարգը նախատեսում է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը որևէ հարցի վերաբերյալ հաճախ է ստանում հարցումներ, ապա պետք է դրանք ամփոփի ու տեղադրի իր պաշտոնական կայքում:

Չնայած դիտարկված 37 մարմինների կայքերի մեծ մասն ունի Հաճախ տրվող հարցեր բաժինը, սակայն դրանք չթարմացվող բաժիններ են: Կայքի գործարկման հենց սկզբից այստեղ տեղադրվում են մարմնի գործունեությանը կամ ոլորտին վերաբերող մի քանի հարց ու պատասխան և այլևս այս բաժինները չեն թարմացվում: Այնինչ տեղեկությունների տրամադրման կարգի մասին Կառավարության որոշմամբ՝ նախատեսվում է, որ այս բաժնում պետք է հրապարակվեն 5 և ավելի միևնույն բովանդակության հարցումները և դրանց պատասխանը:

Կարգի մեկ այլ կարևոր դրույթներից է պաշտոնական կայքերի միջոցով հարցում ուղարկելու հնարավորության ապահովման պահանջը, ընդ որում, այդ բաժինները պետք է նաև ապահովեն հարցման տեքստը կցելու հնարավորություն: Կայքը պետք է ապահովի էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը: Սակայն, դիտարկված 37 մարմիններից 36 չի կատարել Կառավարության որոշման պահանջը:

Այնինչ, Կառավարության կողմից իսկ ընդունված N 1204-Ն Որոշումն արդեն իսկ իրավական հիմք է ստեղծել առցանց հարցումները պաշտոնական ընթացակարգով դիտարկելու և դրանց պատասխանելու համար, ընդ որում դրանք վավեր են «*ստորագրությամբ*, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով»: Ստորագրվածի նշումը հուշում է, որ դիմումի ստորագրած սքանավորված տարբերակի կցումով հարցումները կարող են վավեր համարվել և այս բաժիններում, համաձայն Կառավարության որոշման 3-րդ կետի, պետք է այդ հնարավորությունը տրվի:

Բաց կառավարման գործընկերության շրջանակներում Հայաստանի Գործողությունների առաջին ծրագրով ընդունվեց «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշումը, որն ուղղված էր պետական մամինների ինտերնետային կայքերի միասնականացմանը: Սրանով ամրագրված է պարտադիր հրապարակման 29 խումբ տեղեկություն, որոնք պետք է պարտադիր հրապարակվեն պաշտոնական ինտերնետային կայքերում: Կարգը ընդունվեց,

սակայն այն գործնականում չիրականացվեց. պետական մարմինների ինտերնետային կայքերից և ոչ մեկը լիարժեքորեն չի ապահովում նաև այս որոշման պահանջները:

Սեփական նախաձեռնությամբ հրապարակված տեղեկատվությունը պետք է իսկապես հասանելի ու մատչելի լինի մարդկանց համար: Այն պետք է ներկայացվի այնպես, որ հեշտ լինի այն գտնելը, իսկ ընթերցելիս՝ պարզ և հասկանալի: Օգտագործողի համար չափազանց կարևոր է, որ նույնբառովանդակ տեղեկությունները բոլոր մարմինների կայքերում նույն բաժիններում հրապարակվեն: Օրինակ՝ բոլոր կայքերում լինի վիճակագրություն բաժինը, որտեղ օգտագործողները կգտնեն վիճակագրական տվյալներ:

Համեմատաբար պատկերը դրական է մարզպետարանների կայքերում, իսկ բացասական՝ ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններում: Տարբեր նախարարություններ տարբեր ծավալով են հրապարակում անհրաժեշտ տեղեկությունները, սակայն միասնական մոտեցում և հստակ խմբավորումներ չկան:

Ամեն դեպքում, արձանագրելով պրոակտիվ հրապարակման ապահովման հիմնական խնդիրները, հարկ է նաև նշել, որ տեղեկատվության ազատության իրավունքը վերջին մի քանի տարիների ընթացքում հսկայական քայլերով առաջընթաց է ապրել: Տեղեկատվության ազատության իրավունքը ամրապնդվել է հայաստանյան քաղաքացիական հասարակության շրջանակներում և արդեն մուտք է գործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման որոշ մարմիններ՝ նպաստելով բաց և հրապարակային կառավարմանը և թափանցիկ աշխատանքին:

Առաջարկություններ

Հաշվի առնելով պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերի գնահատման արդյունքները, ինչպես նաև վերջին մի քանի տարիների՝ տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկան, ներկայացնում ենք առաջարկություններ ուղղված պետական կառավարման մարմիններին՝

- ՀՀ կառավարությանը՝ համապատասխան հանձնարարականներ տալ բոլոր նախարարություններին, ԿԱ մարմիններին և մարզպետարաններին մեկամսյա ժամկետում ինտերնետային կայքերում հրապարակված տեղեկությունները համապատասխանեցնել ՏԱ օրենսդրության պահանջներին:
- Ապահովել պաշտոնական կայքերի բովանդակային միասնականությունը: Դրանք պետք է լինեն մեկ տրամաբանությամբ, օրինակ, բյուջեն և դրա կատարողականը հրապարակել մեկ՝ Բյուջե բաժնում, մեկը մյուսին հաջորդելով: Եվ կամ տեղեկություն ստանալու հարցման ձևը պետք է լինի մեկը, այլ ոչ թե՝ մի պետական կայքում պահանջ դրվի հարցումը լրացնելիս անձնագրի տվյալներն էլ ներմուծել, մյուսում՝ գրանցվել կայքում և հետո նոր հնարավորություն ստանալ դիմելու և այլն:
- Բոլոր պաշտոնական կայքերի գլխավոր էջում ստեղծել ՏԱ բաժին, որտեղ հրապարակել տեղեկատվության ազատության վերաբերյալ իրավական ակտերը, տեղեկատվության տրամադրման կարգը, ՏԱ պատասխանատուի կոնտակտային տվյալները և գործառույթները, տեղեկություն ստանալու առցանց հարցում, ՏԱ օրենդրությամբ պահանջվող պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները և դրանց փոփոխությունները:
- Ապահովել կայքերում հրապարակվող տեղեկությունների ամբողջականությունը, թարմացումները և մատչելիությունը:
- Պաշտոնական կայքերում լիարժեք, ամբողջական, ՏԱ օրենսդրության պահանջներին համապատասխան տեղեկությունների հրապարակման խնդիրը լուծելու համար առաջարկում ենք գերատեսչությունների ղեկավարներին համապատասխան մարմնի բաժինների և/կամ վարչությունների ղեկավարներին հանձնարարել լիարժեքության և պատշաճության **անընդհատ ստուգում և վերահսկողություն**, ինչը կբացառի պատասխանատուների անփույթ վերաբերմունքը կամ անուշադրության արդյունքում թերի և ոչ լիարժեք տեղեկությունների հրապարակումը:
- Պետական կառավարման մարմիններում թափանցիկության ապահովման և հրապարակայնության բարձրացման կարևորագույն նախադրյալը տեղեկություն տնօրինող մարմնի աշխատակիցների համապատասխան պատրաստվածությունն է: Առաջարկում ենք **պարբերաբար, տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել տեղեկատվության ազատության թեմայով վերապատրաստումներ**, աշխատանքային քննարկումների ժամանակ անդրադառնալ տեղեկատվության ազատության իրավունքին, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ.-ին և փոփոխությունների չի ենթարկվել: Հաշվի առնելով ՏԱ պրակտիկան և օրենսդրության գործնականում կիրառման փորձը, այսօր արդեն անհրաժեշտ է **համապատասխանփոփոխություններ և լրացումներ անել իրավական դաշտում:**

Մասնավորապես, պրոակտիվ հրապարակման սկզբունքը լավագույնս իրականացնելու համար անհրաժեշտ է օրենքով կարգավորել նաև հետևյալ հարցերը.

- Պաշտոնական կայք ունենալու պարտադիր լինելը: Հնարավոր է՝ այստեղ ներառել նաև պաշտոնական կայքերին ներկայացվող հիմնական պայմանները (կառավարության որոշմամբ սահմանված):
- Հրապարակման ձևի ընտրությունը. տեղեկատվություն տնօրինողը պետք է տեղեկությունն այնպես հրապարակի, որ այն հնարավորինս արագ հասանելի լինի դրա կարիքն ունեցող յուրաքանչյուր անձի համար: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ՁԼՄ-ներին տրամադրել իրենց տնօրինության տակ գտնվող և հանրային շահ ներկայացնող իրադարձությունների և փաստերի մասին տեղեկություններ:

Առաջարկություններ ուղղված կայքերում հրապարակված կոնկրետ տեղեկությունների համակարգմանն ու դասակարգմանը՝

- Կայքի գլխավոր էջում, ամենաակնառու տեղում հրապարակել տեղեկությունների տրամադրման համար պատասխանատու անձի անունը, կոնտակտային տվյալները:
- Կառուցվածք բաժնում ևս նշել ՏԱ պատասխանատու անձի վերաբերյալ տեղեկությունը, հրապարակել նրա գործառույթները:
- Կայքի գլխավոր էջում առանձնացնել Տեղեկատվության ազատության բաժինը, որտեղ հրապարակել տեղեկությունների տրամադրման կարգը, տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, առցանց հարցում ուղարկելու ենթաբաժինը, ՏԱ պատասխանատուի տվյալները, ՏԱ իրավունքի պարզաբանումները, տեղեկություն տրամադրելու վճարների չափերը, տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալները, ՏԱ օրենսդրության իրավական ակտերը և այլ անհրաժեշտ նյութեր: Այս հարցում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պատրաստ է համագործակցել մարմինների հետ և մշակել ՏԱ բաժնում հրապարակվող նյութերը, տրամադրել դրանք:
- Կայքի Հաշվետվություններ բաժնում առանձնացնել Գործունեության հաշվետվություններ ենթաբաժինը և այստեղ հրապարակել բոլոր տարիների փաստաթղթերը, ապահովել դրանց թարմացումը:
- Իրար տակ հրապարակված փաստաղթղերը տեղադրել նվազման կարգով, ըստ թվականների կամ վերջին թարմացված տարբերակների, որպեսզի, մուտք գործելով տվյալ էջը, առաջինը երևան վերջին ներմուծված և ամենաթարմ տեղեկությունները:
- Հաստատված բյուջեն և դրա կատարման հաշվետվությունն այն կարևոր փաստաթղթերն են, որ պետք է հրապարակվեն առանձին բաժնում: Գլխավոր էջում

առանձնացնել Բյուջե և դրա կատարողական բաժին, այստեղ բյուջեների կատարողականի մասին հաշվետվությունները հրապարակել բյուջեների հետ միասին, իրար հաջորդելով, որպեսզի օգտագործողին առավել հարմար լիներ նույն տեղից գտնել այդ տեղեկությունները:

- Թվային տվյալներ պարունակող բոլոր փաստաթղթերը տեղադրել օգտագործման համար մատչելի ձևաչափով, նախընտրելի է Excel ձևաչափը:
- PDF ձևաչափով փաստաղթղերը հրապարակել պատճենման հնարավորությամբ (copy-paste):

Մոնիտորինգն իրականացրել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ՍեքԴև հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ՍեքԴև հիմնադրամ
Գործադիր տնօրեն՝ Դ. Քոլինգս
Էլ. հասցե՝ info@secdev-foundation.org
Կայք՝ http: //new.secdev-foundation.org/
Հեռ.՝ +1 613 755 4007

The SecDev Foundation
Executive Director
Deirdre Collings
Email: info@secdev-foundation.org
Web: http://new.secdev-foundation.org/
Tel.: +1 613 755 4007

ՍեքԴև հիմնադրամը Կանադայում հիմնավորված ուղեղային կենտրոն է, որը զբաղվում է և՛ անվտանգությամբ, և՛ զարգացման նախագծերով: Հիմնադրամն աշխատում է Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Մերձավոր Արևելքի այն երկրների և շրջանների տեղական բաժնետերերի հետ, որոնք անմիջականորեն հակամարտությունների, անապահովության և անպաշտպանվածության զոհ են: Հիմնադրամը փաստերի վրա հիմնված
հետազոտություններն օգտագործում է տեղական գիտելիքն ու ճկունությունը ընդլայնելու և հզորացնելու համար: Մեր նպատակն է կառուցել էլ ավելի լավ աշխարհ՝ իմացությունների և կարողությունների ընդլայնման և զարգացման միջոցով: Մեր աջակիցներն են Միջազգային զարգացման հետազոտությունների կենտրոնը (IDRC), Freedom House-ը, «Բաց հասարակություններ» հիմնադրամը, Համաշխարհային խաղաղության և անվտանգության
հիմնադրամը (DFATD) և Մոնրեալի Ցեղասպանության և մարդու իրավունքների ուսումնասիրությունների ինստիտուտը: Մենք ունենք գործընկերներ և ծրագրեր Լատինական Ամերիկայում, Մերձավոր Արևելքում, ԱՊՀ անդամ պետություններում, Հարավ Արևելյան Ասիայում, Աֆրիկայում, Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում:

The SecDev Foundation is a Canadian-based think-do tank that works at the cross-roads of security and development - because you can't have one without the other. We work with local stakeholders in countries and regions affected by conflict, insecurity and fragility in the Middle East, Latin America, Eurasia, Africa and Asia. We use evidence-based research to extend and empower local knowledge and resilience. Our aim is to build a better world through open intelligence and empowerment.
Our work has been supported by the International Development Research Centre (IDRC), Freedom House, The Open Societies Foundation, the Global Peace and Security Fund (DFATD), and the Montreal Institute for Genocide and Human Rights Studies. We have partnerships and projects in Latin America, the Middle East, the CIS countries, Sub-Saharan Africa, South East Asia, Western Europe and the United States.

Երևան 2016